


ՏԵՂԵԿԱՏՈՒԻ

ԴԵԳԻԵԳԱԾՈՒ

ديجيجادو

Հրատարակութիւն Գահիրէի ՀԲԸՄ-ի

نشرة جمعية القاهرة الخيرية الأرمنية العامة



ԱՍԻՈՅ ՔԱՐՏԷՍԸ՝ ԱՄԷՆ ԵՐԿԻՐ ԻՐ ԼԵԶՈՒՈՎ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՍՐԱԳԻՐ
Մարուշ Երամեան

ԽՍՐԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԱՏՈՒ
Մարտիկ Պալաեան

ՍՐԱԳՐԻՉ
ՎԵՐՍՏՈՒԳԻՉ
Անայիս Ճիգմեճեան

ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ
ՁԵԼԱԽՈՐՈՒՄ
Շահե Լուսարարեան

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Nubar Digital

Գահիրեի ՀԲԸՄ-ի
լուրերուն հետեւեցէք
www.agbuegypt.com
կայքէջով:

Ծանօթացէք «Հայաստան
եւ Հայերը Արաբական
Սամուլին մէջ. 1876-1923»
հաւաքածոյի նիւթերուն
www.arminmedia.com
կայքէջով:

«Տեղեկատու»ի յօդուածա-
գիրներուն արտայայտած
կարծիքները անպայման-
օրէն չեն ներկայացներ
Գահիրեի ՀԲԸՄի պաշտո-
նական տեսակէտները:

ԹԻԻ 109 ՆՈՐ ՇՐՋԱՆ,
ՀՈԿՏԵՄԲԵՐ 2023

Խմբագրական Մտորումներ	1
ՀԲԸՄը Արցախի հետ	2
ՀԲԸՄի խօսքը Ռուբէն Վարդանեանի ձերբակալութեան	3
Յուշագիր Կեդրոնէն	4
Աիը Փոքրերուն համար	5
ԱԻ եւ Ծրագրաւորում	6
Ալ. Սարուխանի Ծննդեան 125-ամեակ	10
Մեր հիւրերը՝ Մարիա Քրիստինա Խանճեան	10
Եգիպտահայ Երիտասարդներուն Ամառը Հալա Շամամեան-Նիկոլեան	11
AVC-ի 10-ամեակը	14
Նոր Հրատարակութիւն «Դիմանկարներ Աղեքսանդրիայէն»	14
Պատառիկներ Գրիգոր Համբիկեանէն Դոկտ. Վաչէ Ղազարեան	16
Մեր արխիւէն՝ Բացիկ մը	24
Cité des Tentes Սօսի Ներքերեան	26
Մեր կորուստները՝ Պերճ Ճէպլեճեան	28
Նեֆերթիթին կ'ուզէ տուն վերադառնալ	29
Կարճ լուրեր	31
Կամքի տարեկան մրցաշարքը Սօսի Ներքերեան	33
ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ տարեկան մրցաշարքը Սօսի Ներքերեան	35
Հ.Մ.Ը.Մ. Արարատի տարեկան մրցաշարքը Սօսի Ներքերեան	39
Անդամական	



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

Անցնող երեք ամիսները անասելի վերիվայրումներու շրջան էին ամբողջ աշխարհին համար. 4 Օգոստոսի Հաուայի հրդեհները իրապես սարսափելի էին, սակայն ոչ ոք կը պատկերացներ, որ անոնք սկիզբը պիտի հանդիսանային շարք մը այլ աղետներու:

2-3 Սեպտեմբերին Ալճերիոյ հեղեղներն էին, որոնց յաջորդեց 8 Սեպտեմբերի Մարոգի երկրաշարժը:

Այս բոլորը կարելի պիտի ըլլար տանիլ, եթէ անմիջապէս յետոյ, երկար ատեն շրջափակուած մնալէ ետք, Արցախը յարձակումի, պապ՝ պարպումի չենթարկուէր:

Տակաւին չէինք հասկցած կատարուածն ու անոր տարողութիւնը, երբ վրայ հասաւ Պաղեստինի աղետը, իր շա՛տ հեռուները հասնող արձագանգներով:

Այս միջադէպերը իրենց ամբողջական լրատուութիւնը ունեցան ոչ միայն տպագրուած մամուլին, այլ նաեւ համացանցային լուրերուն մէջ, որոնց հակազդեցութիւնը նոյնքան տարողունակ էր՝ մասոնականութեան որոշումներ, ԱԻԻ դերը եւ այլն:

Ուշադիր հետեւողը պիտի նկատէ, որ մեր թուած բոլոր աղէտներն ալ մարդկային միտքին արդիւնք են, ոչ միայն պատերազմները, այլ նաեւ բնութեան աղէտները, որոնք ծայր առած են մարդկային զսպանակներով:

Բայց ուշադրութիւն դարձուցա՞ծ էք, թէ դէպքերը ինչպիսի հզօր արագութեամբ է որ կ'ընթանան, կարծես չեն ուզեր աշխարհի մարդոց առիթ տալ, որ մտածեն անոնց մասին, նախապատրաստուին, կամ դարմանումի եւ վերանորոգումի ձեւեր ու միջոցներ փնտռեն:

Ուրեմն, կը մտածես, ճիշդ են անոնք, որոնք կը խօսին երկրագունդին 8 միլիառ բնակչութիւնը վերածել ... մէկի, ՄԷԿ միլիառի, այսինքն բնաջնջել 7 միլիառ մարդ, հակառակ անոր, որ երկրագունդը դիւրութեամբ կրնայ կրել շատ աւելի մեծ թիւ մը, միայն թէ մարդը միջամուխ չըլլայ բնութեան գործերուն:

Այս ալ ուրիշ աղէտ, որուն նոր է որ կ'անդրադառնանք, թէեւ վաղուց սկսեր է ատիկա, այն օրէն երբ սկսան Ամազոնի անտառներուն ծառերը հատել:

Միակ տարածաշրջանը որ հանդարտ է, համեմատական խաղաղութեան մէջ, ծայ-

րագոյն արեւելքն է՝ Չինաստան, Քորէա, Ճաբոն եւ այլն ... թէեւ այնտեղ ալ բռնատիրութենէ կը տառապի ժողովուրդը:

Բայց կեանքը շատ անսպասելի դարձրածքներ ունի, անակնկալներ, որոնց հաշիւը ըրած չէ մարդը, եւ որոնք, յոյսով ենք, պիտի կարենան դէպքերուն ուղղութիւնը ամբողջովին փոխել – այսքան ժխտակա-նութենէ ետք – դէպի լաւը:

Բարեբախտաբար եգիպտահայ գաղութը, հակառակ աշխարհի տակնուվրայութեան եւ հայրենիքի ու Արցախի տառապալից լուրերուն, կը շարունակէ իր գուրգուրանքը նոր սերունդին հանդէպ (ԱԻ եւ Ծրագրաւորում), կը շարունակուի նոր ընտանիքներու կազմութիւնը, եւ կեանքը, իր լաւով վատով կը ստիպէ մեզի պահել մեր դրական նայուածքը:

Աշուն է եւ աշնան հետ՝ վերամուտ դպրոցներու եւ համալսարաններու: Այս տարի Գահիրէի Գալուստեան-Նուպարեան Ազգային Վարժարանէն եւ Մերճանեան մանկապարտէզէն ներս ունինք 141 աշակերտներ, 27-ը մանկապարտէզէն ներս, մնացեալը Գալուստեան-Նուպարեանի աշակերտ:

Չմոռնանք սակայն, որ նոյնքան թիւ մը ունինք (մօտաւորապէս) օտար վարժարաններ յաճախող աշակերտներու, դժբախտաբար:

Գահիրէի համալսարաններուն մէջ ունինք 47 ուսանողներ, մագիստրոսականի պատրաստուող 3 եւ վարդապետականի պատրաստուող 2 աշակերտներ, իսկ Աղեքսանդրիոյ մէջ ունինք 4 համալսարանական եւ 1 մագիստրոսի պատրաստուող աշակերտներ: Ընդհանուր թիւ՝ 57:

Եթէ նկատի առնենք գաղութին թիւը, համալսարանական եւ աւելի բարձր աստիճաններու դիմող ուսանողներուն թիւը բնաւ արհամարհելի չէ, ինչ որ յոյսով կը զինէ մեզ:

Բարի վերամուտ եւ իրապէ՛ս բարի օրեր մեր բոլորին, փոթորիկներէ բռնուած այս շրջանին մէջ:




ՀԱՐԸՄԻ ԱՐՑԱՒԻ ՀԵՏ

Արցախէն վտարուած հայերուն համար աշխարհը տակնուվրայ եղեր է: Բայց երբ Հայաստանի սահմաններէն ներս կը մտնեն, կը գտնեն յոյսի առաջին նշանները՝ ՀԱՐԸՄԻութեան կազմակերպիչներն ու կամաւորները, եւ համաշխարհային կեդրոնական խոհանոցի աշխատողները, որոնք միացեր են, օգնելու համար յոգնած ընտանիքներուն եւ ապահովելու զիրենք տաք կերակուրով եւ անշուշտ մեծ

գուրգուրանքով, զանոնք ֆիզիքապէս եւ բարոյապէս ամրապնդելու, որպէսզի կարենան դիմակայել գալիք դժուար օրերը: Անոնք նաեւ գումար կը ստանան, իրենց անմիջական կարիքները հոգալու համար:

Տեսնելու համար թէ ինչպէս կրնաք օգտակար դառնալ Արցախի մեր քոյրերուն եւ եղբայրներուն, այցելեցէք հետեւեալ կայքէջը. <https://agbu.org/global-relief>





ՀԲԸՄԻ ԽՕՍՔԸ

ՌՌԻԲԷՆ ՎԱՐԴԱՆԵԱՆԻ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

Ատրպեյճանական իշխանություններուն կողմէ ականաւոր հայ բարերար Ռուբէն Վարդանեանի ձերբակալութեան լուրը, պէտք է դառնայ միջազգային հանրութեան համար հնչեղ եւ չարագուշակ ահազանգ: Ատրպեյճան լրջօրէն կը վերաբերի իր մտադրութիւններուն՝ հատուցման արշաւ ծաւալել բոլոր այն հայերուն հանդէպ, որոնք մասնակցեր են Լեռնային Ղարաբաղի խաղաղ կառավարմանն ու պաշտպանութեանը: Այս աղմկայարոյց թշնամութիւնը Ատրպեյճանի կողմէ մարդկութեան դէմ իրականացած անթիւ ձերբակալութիւններուն եւ յանցանքներուն միայն մէկ օրինակն է:

Ռուբէն Վարդանեան մեծահարուստ բարերարը, որ Մոսկուա կը բնակէր, վերադարձեր էր Արցախ եւ հոն շրջան մը վարեր նախարարի պաշտօն:

«Այս ցուցադրական ձերբակալութիւնը յստակ խօսք է, որ Ատրպեյճան կը հետեւի նոյն ցեղասպանական ոճին, իր թուրք գործընկերոջ նման: Փաստօրէն, ոչինչ փոխուած է 1915 թուականէն ի վեր, եւ մենք վերադարձեր ենք 20-րդ դարու առաջին ցեղասպանութեան սկզբնակէտին կարծես: Միջազգային խաղացողները պէտք է դիրքորոշում ունենան, որպէսզի բոլոր քաղաքացիները, որոնք ստիպուած լքեր են իրենց պապենական հայրենիքը, արժանապատիւ կերպով հեռանան», - յայտարարեց ՀԲԸՄիութեան նախագահ

Պերճ Սեդրակեան՝ լսելով Վարդանեանի ձերբակալութեան տազնապալի լուրը:

ՀԲԸՄիութիւնը կոչ կ'ընէ Միացեալ Ազգերու Կազմակերպութեան Անվտանգութեան Խորհուրդի իւրաքանչիւր անդամին, բոլոր պետութիւններու ղեկավարներուն եւ ազատ աշխարհի արտաքին գործերու նախարարութիւններուն ոտքի կանգնիլ համերաշխութեամբ, անյապաղ գործելու համար: Աշխարհը կը հետեւի, թէ արդեօք միջազգային կարգի լծակները կը գործեն՝ Ատրպեյճանին կանգնեցնելու համար:

Լեռնային Ղարաբաղի հայերուն պէտք է թոյլ տալ առանց արգելքի դուրս գալ ելլել այդ տարածքէն. համաշխարհային տէրութիւններուն համար աւելի քիչ բան պահանջելը Ատրպեյճանի հետ մեղսակցութիւն կը դառնայ, քանի մը օրուան ընթացքին հայերու բազմաթիւ սերունդներու ոչնչացման համար:

Գործողութիւնները աւելի բարձր կը խօսին, քան խօսքերը:

Այժմ բոլոր գործնական ճնշումները պէտք է կիրարկել Ռուբէն Վարդանեանին եւ բոլոր կալանաւորներուն անյապաղ ազատ արձակելու համար: Այժմ ժամանակն է, որ այն ազգերը, որոնք կը նպաստեն մարդու իրաւունքներուն եւ խաղաղութեան, միջամտեն հազարաւոր հայերու անունով, որոնց կեանքին անմիջական վտանգ կը սպառնայ:



ՅՈՒՇԱԳԻՐ ՀԲԸՄԻ ԿԵԴՐՈՆԷՆ

ՀԲԸՄԻ բոլոր շրջանակներուն, մասնաճիւղերուն, դպրոցներուն, երիտասարդական եւ Մասնագիտական խումբերուն

ՀԲԸՄԻ նախագահ Տիար Պերճ Սեդրակեանէն

17 Հոկտեմբեր 2023

Նիւթ՝

Յայտարարութիւն Միջին Արեւելքի ճգնաժամին առնչութեամբ

Քանի որ Մերձաւոր Արեւելքի ճգնաժամը կը շարունակէ սրիլ, նոյնիսկ երբ մենք կը շարունակենք գործ ունենալ աւերիչ իրադարձութիւններուն հետ մեր իսկ Արցախի եւ Հայաստանի մէջ, կը հասկնանք եւ կը յարգենք մեզմէ իւրաքանչիւրին կարծիքը այդ մասին:

Մինչ դուք, որպէս անհատներ, այս շատ կարեւոր եւ զգայուն նիւթերուն շուրջ կը զրուցէք, ես կոչ կ'ընեմ ձեզի, որպէս ՀԲԸՄԻ ղեկավարներ եւ ներկայացուցիչներ, որեւէ գրաւոր կամ բերանացի մեկնաբանութիւն կամ յայտարարութիւն չընել Միութեան անունով, արցախեան հակամարտութեան եւ ճգնաժամին հետ կապուած:

Այս պայմաններուն մէջ Կեդրոնական Վարչութիւնը անհրաժեշտութեան պարագային կ'արտայայտէ Միութեան տեսակէտները հաղորդագրութեամբ:

Նոյն հաղորդագրութիւնը պէտք է ընդունուի կամ օգտագործուի որպէս ուղեցոյց մեր կազմակերպութեան կողմէ: Այսքանը ձեզմէ կը խնդրենք որպէս շրջաններ, մասնաճիւղեր, դպրոցներ, սկաւառներ, մարզիկներ, երիտասարդներ եւ երիտասարդ մասնագէտներ:

ՀԲԸՄԻութիւնը համաշխարհային կազմակերպութիւն է, որ ինքզինք յաճախ աւելի շատ կը զգայ որպէս մեծ առաքելութեամբ համաշխարհային ընտանիք մը, որուն բոլորս հաւատարիմ ենք: Յատկապէս ճգնաժամի ժամանակ կը խնդրենք զգօն մնալ, համաշխարհային մեր ցանցին անվտանգութիւնն ու ապահովութիւնը պահելու եւ չստեղծելու համար որեւէ շփոթ, որ կրնայ բացասաբար ազդել մեր սքանչելի կազմակերպութեան վրայ:

Ձեր փոխըմբռնումն ու համագործակցութիւնը մեծապէս գնահատելի են:

Շնորհակալութիւն

ԱԻՐ ՓՈՔՐԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

Ուրբաթ, 29 Սեպտեմբեր 2023-ի երեկոյեան տեղի ունեցաւ Արուեստական Իմաստութիւն (Artificial Intelligence) դասընթացքին առաջին հանգրուանին վերջին՝ ութերորդ դասաժամը, որ նաեւ փոքրերուն աւարտական աշխատանքները ներկայացնելու եւ իրենց վկայագիրներ յանձնելու օրն էր:

Այս դասընթացքը Եգիպտոսի ՀԲԸՄի Երիտասարդ Մասնագէտներ (YP Young Professionals) խմբակին կողմէ փոքրերուն համար կազմակերպուած էր:

Գահիրէի գաղութէն 35 փոքրեր եւ պատանիներ, երկու խումբերով եւ տարիքային երկու բաժանումներով՝ 7-9 եւ 10-14 տարեկան, քանի մը ամիսէ ի վեր կը հետեւէին Մարինա Սիմոնեան-Պըլլըքտանեանի եւ Գեղամ Կարսեանի ցուցմունքներուն, սկզբնական գիտելիքներ իմանալու համար այս նորագոյն ուղղութեան մասին:

Հաւաքին բարի գալուստի խօսքէն ետք, Ռուպինա Նորարեւեան հրաւիրեց ներկաները, որ պահ մը յօտնկայս յարգեն յիշատակը նոր հանգուցեալ Պերճ Զէպէճեանի, որ Աղեքսանդրիոյ ՀԲԸՄի մասնաճիւղին ատենապետն էր:

Մարինա Սիմոնեան-Պըլլըքտանեան բացատրեց հաւաքուած ծնողներուն, թէ ի՞նչ է ԱԻՐ եւ ի՞նչ ձեւով կը բանի:

«Ինչպէս որ մեր միտքը կ'որոշէ իր տեսածին բնոյթը, օրինակ լոյսին լոյս ըլլալը, այդ ձեւով ալ ԱԻՐ, համակարգիչին մէջ ներմուծուած միլիոնաւոր նկարներու հիմքին վրայ, կրնայ որոշել թէ իրեն ցոյց տրուածը ի՞նչ է»:

Ապա Գեղամ Կարսեան բացատրեց, թէ ի՞նչ է ծրագրաւորումին դերը ԱԻի աշխատանքներուն մէջ:

Հինգ խումբերու բաժնուած պատանիները ցուցադրեցին իրենց աշխատանքները, որոնցմէ երկուքը՝ մէկ փոքրերու եւ մէկ պատանիներու խումբեր աշխատած էին «Ի՞նչ է հայ ըլլալը» եւ «Ո՞վ է հայը» թեմաներով եւ խաղեր պատրաստած:

Հետաքրքրական էր ծնողներուն ուշա-



դիր հետեւիլը. անոնց դէմքերուն վրայ յստակ էր, թէ իրենք իրենց զաւակներէն շա՛տ նուազ կը հասկնան այս բոլորը, իրենք, որոնք ամէն օր «դաս կը սորվեցնեն» իրենց զաւակներուն:

Մեծ խանդավառութեան մէջ 35 փոքրեր վկայագրեր ստացան, որմէ ետք բոլորը ուրախութեամբ վայելեցին հիւրասիրութիւնը:

Հաւաքին ներկայ էին բոլոր մասնակիցներուն ծնողները, ինչպէս նաեւ ՀԲԸՄի Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովի ատենապետ տոքթ. Գէորգ Երզնկացեանն ու ՀԲԸՄի Գահիրէի Տեղական Մասնաճիւղի ատենապետ դոկտ. Զործ Սիմոնեանը:

Բոլոր փոքրերը եւ պատանիները խանդավառութեամբ հաստատեցին այս շատ հետաքրքրական դասընթացքը շարունակելու իրենց փափաքն ու հաստատամտութիւնը:



ԱԻ ԵՒ ԾՐԱԳՐԱԿՈՐՈՒՄ

2023 թուականի Մայիսին սկիզբ առաւ Եգիպտոսի Երիտասարդ Մասնագէտներու Նախաձեռնութիւնը՝ «ABAKA»-ն, որ փոքրերու եւ պատանիներու համար նախատեսուած դասընթացք մըն էր, զոր կը վարէին Մարինա Սիմոնեան-Պըլըքտանեանն ու Գեղամ Կարսեանը, բնաբան ունենալով «ABAKA-ն կը կերտէ հայերու ապագան» խօսքը: Այս դասընթացքներուն առաջին շրջանին մասնակցեր են 8-14 տարեկան 35 աշակերտներ:

Մարինա Սիմոնեան-Պըլըքտանեան աւարտած է Օքսֆորտի համալսարանը որպէս գիտութիւններու մագիստրոս, մասնագիտացած ԱԻի մէջ, եւ ներդրումներու փոխ նախագահ է: Ծառայած է որպէս Օքսֆորտի մաթեմատիկայի դեսպան եւ տիրացած է Մեծն Բրիտանիոյ Ուսանողներու ոսկի մրցանակին:

Գեղամ Կարսեան բժիշկային յաւելուածներու հմուտ ճարտարապետ է եւ արտադրանքի փորձառու տնօրէն, որ քանի մը տարբեր նախագիծերու մաս կը կազմէ Եգիպտոսի, Եւրոպայի եւ Մերձաւոր Արեւելքի մէջ: Կարսեան նաեւ հեղինակ է գիտարուեստական (տեխնիկական) գրութիւններու, ինչպէս եւ միջավայրի պաշտպան է:

Դասընթացքին առաջին շրջանին կեդրոնացումը եղած է ծրագրաւորումի եւ ԱԻի մանրամասն ներածութեան վրայ, հետաքրքրական թեմաներով եւ խաղերով: Առաջին նիստը սկսանք Արիեստական Իմաստութեան եւ ծրագրաւորումի գործնական ներածութեամբ, ուր քննարկըւեցաւ «ինչի՞ մասին կը ստիպէ մեզ մտածել Արիեստական Իմաստութիւնը»: Մեր միտքերը քանի մը հետաքրքրական պատասխաններ ունէին՝ ԱԻ կը նմանի Կուկլըին, ԱԻը համակարգիչ է կամ ռոպոթ, որ մարդու նման կը վարուի եւ կը մտածէ: Յետոյ քննարկեցինք «Ի՞նչ է ծրագրաւորումը» եւ ստացանք քանի մը հետաքրքրական պատասխաններ՝ ծրագրաւորումը համացանցի կարիք ունի, լաւ համակարգիչի եւ պահեստի,



դուք կրնաք խաղեր ստեղծել եւ նորարարութիւններ կատարել ծրագիրներով, եւ այլն:

Եւ վերջապէս մենք, որպէս Եգիպտոսի Երիտասարդ Մասնագէտներ, ինչո՞ւ անհրաժեշտ համարեցինք այս դասընթացքը, ԱԻի եւ ծրագրաւորումի մասին:

Որովհետեւ ԱԻը նոր եւ յառաջացող գիտութիւն է, որ իր ազդեցութիւնը ունի ընկերութեան եւ տնտեսութեան վրայ, ամբողջ աշխարհի մէջ: Համաշխարհային Տնտեսական Ֆորումը կը կանխատեսէ, որ այսօր դպրոց յաճախող աշակերտներուն 65%-ը կ'ունենայ այնպիսի աշխատանքներ, որոնք այսօր տակաւին գոյութիւն չունին: Փոքրերը եւ պատանիները պէ՛տք է հասկնան ասիկա, որովհետեւ երիտասարդութեան ապագան է:

1988 թուականին Մեծն Բրիտանիոյ The Daily Mail թերթը հրատարակած էր լուսանկարը այն բոլոր ուսուցիչներուն, որոնք կը բողոքէին դպրոցներուն մէջ հաշուիչներու օգտագործումին դէմ: 35 տարի անց մենք ունինք հաշուիչով եւ առանց հաշուիչի քննութիւններ դպրոցներէն ներս, իսկ դպրոցականները շատ աւելի բարդ հարցերու կրնան պատասխանել:



Կը հաւատանք, որ նոր հաշուիչը ԱԻՆ է, զոր մեր տղաքը պէտք է շատ լաւ գիտնան, որպէսզի կարենան իրենց մարդկային իմաստութիւնը բարձրացնել:

ԱԻԻ հետ աշխատելու հիմքը ծրագրաւորումն է, որ հրահանգներ ստեղծելու գործընթաց մըն է, զոր համակարգիչը կրնայ հասկնալ եւ կատարել: Ասիկա շատ կարեւոր է ժամանակակից նորարարութիւններուն համար:

Ուրբաթ, 29 Սեպտեմբեր 2023-ին, ՀԲԸՄԻ ԵՄՂ հիւրընկալեց իր ABAKA ծրագրին առաջին շարքի «Armenian Tech Wizards»-ի եզրափակիչ նիստը, ՀԲԸՄԻ Ս. Չագրը սրահէն ներս: Միջոցառումը կազմակերպուած էր որպէս գիտութեան փառատօն: Այս դասընթացքներու ութ շաբթերուն մասնակցած փոքրերն ու պատանիները ներկայացուցին իրենց աշխատանքները:

Հանդիսութեան սկիզբը երկու ուսուցիչները՝ Մարինա Սիմոնեան-Պըլըքտանեանն ու Գեղամ Կարսեանը բացատրեցին ծրագրին էութիւնն ու նպատակը:

Այնուհետեւ երեխաները ցուցադրեցին իրենց պատրաստած պաստառները, որոնք կը բացատրէին, թէ ինչ են AI-ն ու AI-ի հինգ մեծ գաղափարները: Անոնք ներկայացուցին արհեստական իմաստութեան վրայ հիմնուած խաղեր, որոնք կառուցուած են հայկական թեմայով եւ ստեղծուած են օգտագործելով մեքենայական ուսուցման տեխնիկան: Երեխաներէն խումբ մը, օգտագործելով իրենց ստեղծած **գոփերը**, նուագեցին Հայաստանի քայլերգը, ինչպէս նաեւ ներկայացուցին զանազան խաղեր Scratch-ի մէջ: Այս խաղերուն մէջ կային հանրահաշիւի խաղեր, երբ խաղցողը կրնայ առաջ երթալ կամ ետ, ըստ ներկայացուած խնդիրներու իր առաջարկած լուծումներուն:

Կարգ մը երեխաներ իրենց ծնողներուն հետ մասնակցեցան «Ծնողներն ընդդէմ AI» խաղին, Pictionary online, ուր երեխաները առարկաներ կը գծէին Google Creative Lab-ի վրայ, իսկ AI տեխնոլոգիան անմիջապէս կը գիտնար պաստառին վրայ գծուած առարկան: Ծնողները պէտք էր ԱԻԷՆ առաջ կռահէին, թէ ինչ գծած են

իրենց երեխաները: Այս խաղին մէջ ծնողները յաղթեցին

Բարեբախտաբար, համացանցային կապը իր դանդաղութեամբ չէր օգնէր, որ ԱԻը անմիջապէս կռահէ գծուածը:

Միջոցառման աւարտին իւրաքանչիւր մասնակիցի յանձնուեցաւ վկայագիր, իսկ շնորհակալագրեր յանձնուեցան ուսուցիչներ Մարինա Սիմոնեան-Պըլըքտանեանին եւ Գեղամ Կարսեանին, Եգիպտոսի ՀԲԸՄԻ Շրջանակային Յանձնաժողովի ատենապետ տոքթ. Գէորգ Երզնկացեանի եւ ՀԲԸՄԻ Գահիրէի ատենապետ դոկտ. Ճորճ Սիմոնեանի անունով:

Պաստառներու վրայ մասնակցողները ԱԻՆ նկարագրեր են որպէս «մարդուն կողմէ ստեղծուած ծրագիր, որ կը ստիպէ համակարգիչներուն մարդու պէս խելացի ձեւով աշխատիլ»: Անոնք նաեւ բացատրեր են ԱԻԻ հինգ մեծ գաղափարները, որոնք տարածուած են AI for K-12 նախաձեռնութեան կողմէ Ամերիկայի մէջ: 1) Ընկալում – համակարգիչները աշխարհը կ'ընկալեն սենսորներու միջոցով, 2) Ներկայացում – ուսուցում –կը պահպանեն աշխարհի պատկերները եւ զանոնք կ'օգտագործեն տրամաբանելու համար. 3) ուսուցում – համակարգիչները կրնան տուեալներէն սորվիլ. 4) բնական փոխազդեցութիւն – խելացի գործիքները կը պահանջեն տարբեր տեսակի գիտելիքներ՝ մարդոց հետ բնականաբար փոխազդելու համար եւ 5) հասարակութեան վրայ ազդեցութիւն – AI-ն կրնայ ազդել հասարակութեան վրայ, թէ՛ դրական, թէ՛ բացասական ձեւով:

8-10 տարեկան մասնակիցները նկարագրեցին, թէ ինչ է **ալկորիթմը**, որպէս «քայլերու շարք մը, որոնք կը փոխեն ձեր ներդրումը, առաջադրանք մը կամ արդիւնք մը ունենալու համար» եւ նկարագրեցին լիմոնատի պատրաստման իրենց ալկորիթմը:

10-14 տարեկան մասնակիցները ստեղծեր են իրենց սեփական հայկական թեմատիկ նեյրոնային ցանցերը: Նյարդային ցանցերը հանգոյցներու միացում են, որոնք իրարու հետ կապուած են շերտերու մէջ եւ այն են, թէ ինչպէս մեքենան կը



սորվի տուեալներէն: Անոնք խանդավառ են ուղեղին մարդկային ներոններով: Առաջին խումբը ստեղծեր էր «Հա՛յ է թէ ոչ» ներոնային ցանցի խաղը՝ 1) Ստեփանակերտէն դուրս գտնուող հսկայ քանդակով՝ «Մենք ենք, մեր սարերը», որ խօսակցական լեզուով «Տատիկ-պապիկ» կը կոչուի, եւ 2) Ամերիկեան pancakes որպէս ներոնային ցանցին մէջ համեմատուող երկու մուտք: Իհարկէ, խաղի արդիւնքը եղաւ «Այո, հայերէն է» միայն այն ժամանակ, երբ թուաբանական **գո-տրով** սկսաւ աշխատիլ «Տատիկ-պապիկ»ը:

Երկրորդ խումբը ստեղծեր էր նոյնանման «Ասիկա հայկականն է» խաղը, «Արարատ լեռը» եւ «Նուռը»՝ որպէս ներոնային ցանցին մէջ համեմատուող երկու մուտք: Խաղին կ'ըլլայ «Այո, հայկական է», երբ թուաբանական գոտով կ'աշխատին կամ «Արարատ լեռ» մուտքագրումը, կամ «Արարատ» եւ «Նուռ» մուտքերը:

Երրորդ խումբը ստեղծեր էր խաղ մը, որ «Ասիկա հայկական մանթը կը պատրաստէ», երբ «Խմորը» եւ «միսը» ներո-

նային ցանցի երկու մուտքերն են: Այս վերջին խաղին արդիւնքը «Այո, ասիկա հայկական մանթը կը պատրաստէ» միայն երբ թուաբանական գոտով աշխատեր են թէ՛ «Խմոր», թէ՛ «աղացած միս» մուտքերը:

Աւելի հին մասնակիցները նաեւ վերապատրաստած էին Google-ի մեքենայական ուսուցման ձեւ մը, օգտագործելով իրենց նոթպուքի գամերաները, դասակարգելու համար երեք տարբեր դասեր՝ օգտագործելով խօսքի եւ «GIF» պատկերներ: Երբ մարդը ձեռքով բարեւէ, կը յայտնուի ռոպորթ եւ համակարգչը կը հնչէ «ABAKA» բառը: Եթէ մարդը երկու ձեռքերը բարձրացնէ, կը յայտնուի հայկական դրօշը եւ համակարգչը կ'ըսէ «Ես հայ եմ» բառերը: Ի վերջոյ, երբ մարդը ձեռքը սրտին կը դնէ, կը համակարգիչի պաստառին վրայ յայտնուի Արցախին օգնելու պատկերը եւ համակարգիչը կ'ըսէ՝ «Մեր սրտերը Արցախի հետ են» բառերը:

Մարինա Սիմոնեան-Պըլըքփանեան
Անգլերէնէ թարգմանեց Մ. Ե.

* * *

Կ'ըսուի թէ Պրագիլի բանտերուն մէջ մեծ իմաստ ունի գիրք կարդալը, որովհետեւ ամբողջ գիրք մը կարդալու պարագային, բանտարկութեան ժամանակէն կը պակսեցուի չորս օր:

Պետութիւնը կ'ուզէ դաստիարակել իր յանցագործները, եւ ոչ տառապեցնել զիրենք:

* * *

Թուրք աղբահաւաքներ միասնաբար գրախանութ-գրադարան մը բացեր են այն բոլոր գիրքերով, որոնցմէ մարդիկ ձերբազատուեր են, աղբերուն մէջ դնելով:

Թուրք եւ աղբահաւաք ... բարբարոս եւ անուս ... կը կարծէինք ...

Աւելի լաւ կ'ընենք, եթէ աչքերնիս բանանք եւ այսօրուան իրականութիւնը այսօրուան նայուածքով դիտենք. Պոլսոյ եւ Անգարայի թուրքը երէկուան ջարդարարը չէ (թէեւ Անատոլիոյ եւ Ատրպէյճանի թուրքը տակաւին է'), կամ գոնէ երեւութապէս չէ:

ԱԼ. ՍԱՐՈՒԽԱՆ ԾՆՆԴԵԱՆ 125-ԱՄԵԱԿ

14 Հոկտեմբեր 2023-ին, Գահիրեի էլ Սայյիտա Զէյնաաթաղամասին մէջ գտնուող Պէյթ էլ Սիննարի կոչուած ուշ միջնադարեան հոյակապ կառոյցին ներքին բակին մէջ տեղի ունեցաւ բացումը մեծահոշակ երգիծանկարիչ Ալեքսանդր Սարուխանի 131 ստեղծագործութիւններուն ցուցահանդէսը, վարպետին ծննդեան 125-ամեակին առիթով:

Այս յորելենական ցուցահանդէսը նախաձեռնողն ու անոր կազմակերպիչն էր Ապտալլա էլ Սաուի, որ այսօր արդէն ճանչցուած մասնագետ մըն է, թէ՛ եգիպտական ծաղրանկարչութեան պատմութեան մէջ որպէս հաւաքագրող եւ հաշուագրող, թէ՛ որպէս տարբեր առիթներով երգիծանկարչական ցուցահանդէսներու կազմակերպիչ:

Ցուցահանդէսի բացումին ներկայ էին եգիպտահայ զոյգ՝ Առաքելական եւ Կաթողիկէ համայնքներուն կրօնական առաջնորդները եւ քանի մը տասնեակ արուեստագէտներ ու արուեստասէրներ, որոնք ըմբոշխնեցին Սարուխանի հանճարեղ ստեղծագործութիւններուն գեղագիտական հաճոյքը:

Ցուցահանդէսը կազմուած էր երկու հատուածներէ.

Ա. Թիւով 104 նկարներու վերարտադ-



րութիւններ, վարպետութեամբ պատրաստուած Շահէ Լուսարարեանի կողմէ, նաեւ մինչեւ այսօր հրաշքով պահպանուած 7 բնօրինակներ, որոնք 1927 թուականին Սարուխանի կողմէ ցուցադրուած էին Աղեքսանդրիոյ մէջ:

Բ. 1973-ի Հոկտեմբերեան պատերազմին եւ անոր նախորդող տարիներու ընթացքին Սարուխանի կողմէ ստեղծուած 20 քաղաքական երգիծանկարներու բնօրի-

նակներ:

Բացման հանդիսութիւնը տեղի ունեցաւ Հոկտեմբեր 14-ի երեկոյեան ժամը 7-ին, ապա ժամը 8-ին տեղի ունեցաւ միջոցառում մը, որուն ընթացքին նախ խօսեցաւ Ապտալլա էլ Սաուի, շնորհակալութիւն յայտնելով ՀԲԸՄիութեան օժանդակութեան, ինչպէս նաեւ Սարուխանի ժառանգներուն, այս գործին աջակցութեան համար:

Խօսեցաւ նաեւ ՀԲԸՄի Գահիրեի Մասնաժողովի ատենապետ դոկտ. Ճորճ Սիմոնեան, շնորհակալութիւն յայտնելով Ապտալլա էլ Սաուիի, իր լուրջ աշխատանքին համար:

Ապա ցուցադրուեցաւ կարճամեղրած վաւերագրութիւն մը, նուիրուած Սարուխանի կեանքին ու գործին, պատրաստուած





Եգիպտոսի Մշակույթի Նախարարության օժանդակությամբ:

Աւարտին չմոռնանք յիշելու, որ ՀԲԸՄԻ հրատարակությամբ այս առիթով լոյս տեսած է գրքոյկ մը, Ապտալլա Էլ Սաուիի հեղինակությամբ, որուն մասնակցեր է նաեւ Սարուխանի թոռնուհին՝ Սիլվա Ներետեան-Բլատեան, անգլերէնի թարգմանելով արաբերէն յառաջաբանը:

Գիրքը ձեւաւորուած է Ասփէ Ճիզմէճեան-Կապէեանի կողմէ:

Ցուցահանդէսը բաց մնացեր է մինչեւ 31 Հոկտեմբեր:


Հրանդ Քէշիշեան



ՄԱՐԻԱ ՔՐԻՍՏԻՆԱ ԽԱՆՃԵԱՆ

4 Սեպտեմբեր 2023-ի երեկոյեան կեդրոնէս ներս վայելեցինք ներկայութիւնը Մարիա Քրիստինա Խանճեան-Ասիլեանի, որ զբօսաշրջութեան համար Եգիպտոս եկած էր հեռաւոր Պուէնոս Այրէսէն (Արժանթին):

Մեր հիւրը լեցուն ձեռքերով եկաւ եւ Միութեանս Երուանդ Գ. Աղաթօն գրադարանին նուիրեց իր ողբացեալ ամուսնին՝ Էտուարտօ Տանթէ Ասիլեանի սպաներէն լեզուով գրած երեք գիրքերը՝ Սո Պեբլօ... Սո Փարտիձ 2022 Մէկ ժողովուրդ... Մէկ կուսակցութիւն (Հնչակեան կուսակցութեան մասին), La Entidad 2017 Կազմակերպութիւնը (Պուէնոս Այրէսի ՀԲԸՄիութիւնը (1911-2011), Nace Una Magna Institución 2014 Մեծ



հաստատութեան մը ծնունդը:

Երեք գիրքերն ալ հարուստ են բազմաթիւ լուսանկարներով, որոնք կը հաստատագրեն այս համեմատաբար նոր գաղութին անցած ուղին:

Էտուարտօ Տանթէ Ասիլեան (1943-2020) ծնած է Պուէնոս Այրէս այնպիսի ընտանիքի մը մէջ, ուր հայկական ականդութիւնները շարունակուած են եւ ծառայութիւնը եկեղեցւոյ թէ ակումբին եղած է ընտանիքին սովորութիւններէն մէկը: Փաստաբանութեան դոկտոր Տանթէ Ասիլեան եղած է անդամ Պուէնոս Այրէսի ՀԲԸՄիութեան, ուր վարած է կարեւոր պաշտօններ:

Մարիա Քրիստինա Խանճեան-Ասիլեան, որ մասնագէտ աստղաբան է, ինք

շար. էջ 25

ԵԳԻՊՏԱՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐՈՒՆ ԱՄԱՌԸ

«Անցած շաբաթներու իրավիճակներէն ազդուած, այսօր իւրաքանչիւր հայ մտահոգ է. մտահոգ է իր հայրենիքով եւ ինքնութեամբ, քանի երբ չկայ հայրենիք, չկայ նաեւ գոյատեւում: Սակայն հայ ազգը առաջին անգամ չէ, որ կ'ենթարկուի այսպիսի իրավիճակի կամ տեղահանման. Պարզապէս մեր բախտն ու ճակատագիրը այսպիսին է եղեր, պարզապէս մենք մեր հայ ըլլալուն գինը շատ սուղ ենք վճարեր:

Հայ ըլլալը պայքարիլ է, պայքարիլ վերականգնումի, վերապրումի եւ գոյատեւման համար: Հայ ըլլալը ամէն անգամ թշնամիին հարուածէն ետք ոտքի կանգնիլ եւ ստեղծագործել է: Հայ ըլլալը վրէժ լուծել է. մեր լաւագոյն միջոցը վրէժ լուծելու բարեկեցիկ եւ բարգաւաճ հայրենիք ունենալն է: Եւ քանի որ հայրենիքը մեր սեփականութիւնն է, մենք բոլորս ալ պատասխանատու ենք անոր նկատմամբ. մեր կարելիութեան սահմաններուն մէջ պէտք է աշխատինք մեր հայրենիքի ազգաշինութեան գործին մէջ»:

Այս խօսքերով սկսաւ տիկին Լալա Շամամեան-Նիկոլեան իր բացման խօսքը, ՀԲԸՄԻ Չագըր սրահէն ներս Ուրբաթ, 13 Հոկտեմբերին տեղի ունեցած ՀԲԸՄԻ Discover Armenia եւ Global Leadership ծրագիրներուն մասնակիցներու հետ հանդիպման, շեշտելով որ նման ծրագիրներ կու գան ամրագրելու ազգապահպանման վեհ նպատակը եւ Սփիւռք-Հայաստան փոխյարաբերութիւնները:

Շամամեան անդրադարձաւ նաեւ ներկայիս Հայաստանի մէջ Արցախէն տեղահանուած մեր հայրենակիցներուն ՀԲԸՄԻ կողմէ մատուցուած օժանդակութիւններուն, ինչպէս բնակարանի եւ սնունդի ապահովում, բժշկական օգնութիւններ եւ աշխատանք գտնելու միջոցներ:

Նախքան մասնակիցներուն ելոյթը, «Յայտնաբերենք Հայաստանը» ծրագրին հիմնադիր առաջնորդ Հերմինէ Տիւզեան տեսերիզով կապուեցաւ մասնակիցներուն եւ անոնց ծնողներուն հետ, իր ուրա-

JOIN US ON FRIDAY 13/10/23 AT 6 PM

AT AGBU'S CHAKER CULTURAL CENTER

Listen to our participants who attended AGBU's

DISCOVER ARMENIA PROGRAM | **GLOBAL LEADERSHIP PROGRAM**

sharing their wonderful experiences, exciting stories, challenges and learnings!

խութիւնը յայտնելով մեր գաղութէն 8 երիտասարդներու մասնակցութեան, որոնցմով կ'ամբողջանար այս տարուան ընդհանուր մասնակիցներուն թիւը՝ 50: Նաեւ յիշեց ծրագրին 20-ամեակի փառաւոր տօնակատարութիւնը, որ տեղի ունեցած էր վերջին գիշերը:

«Իմ ամենաուրախ եւ միեւնոյն ատեն ամենայուզիչ գիշերը վերջին գիշերն էր, երբ բոլորս անհամբեր կը սպասէինք ողջերթի խրախճանքին: Չէինք գիտեր ո՛ր պիտի երթանք, բայց երբ հասանք «Երեւան Պանդոկ» ճաշարան, շատ սիրեցի տեղը. հոն շատ համով խորոված կերանք եւ Արա Գեղեցիկի մասին ներկայացում մը դիտեցինք: Այդ օրուան ամենայուզիչը այն էր, որ գիտէի թէ պիտի բաժնուիմ հայրենիքէս եւ բարեկամներէս» ըսաւ Էտի Զերտէլեան իր խօսքին մէջ:

Հերմինէ Տիւզեան նաեւ յիշեց խումբին տողանցելը այս տարուան կայացած համահայկական խաղերու բացման, Գիւմրիի մէջ:



Ժիրայր Տրդատեան անդրադառնալով ասոր կ'ըսէր՝ «Կեանքիս մէջ առաջին անգամ ըլլալով այսքան մեծ թիւով հայերու կը հանդիպիմ: Աշխարհի չորս կողմերէն 7200 հայ, մէկ տեղ հաւաքուած ... Հայ ըլլալու հպարտութիւնս եւ ուրախութիւնս անսահման էր: Զգացում մը որ երբեք չէի ապրած»:

Հերմինէ Տիւզեան աւարտեց իր խօսքը յաջողութիւն մաղթելով ներկաներուն եւ ՀԲԸՄԻ նոր ծրագիրներուն:

Ասոր յաջորդեց երիտասարդներուն ելոյթը, իրենց ձեռք բերած փորձառութիւններուն եւ վառ տպաւորութիւններուն մասին:

Նախ Սարին Լուսարարեան ծրագրին մասին ամփոփ տեղեկութիւն մը տալէ ետք, շնորհակալութիւն յայտնեց Եգիպտոսի ՀԲԸՄԻ Շրջանակային Յանձնաժողովին, որ հովանաւորելով այս ծրագիրը իրենց առիթ տուած է նոր բարեկամութիւններ մշակելու եւ մօտէն ծանօթանալու հայրենիքին եւ հայ ժողովուրդի պատմութեան, ինչպէս Նարինէ Աւագեան իր խօսքին մէջ յիշեց՝ «Աւելի մօտէն ծանօթանալու համար մեր հայկական մշակութիւն: Երգի եւ պարի դասեր ալ ունեցանք, որ առիթ տուաւ մեզի աւելի մտերմանալու մեր ընկերներուն հետ: Իսկ ՀԲԸՄԻ քայլերգին ու Ազգ Փառապանծ երգին բառերը սորված ժամանակ զգացի թէ

որքան հպարտ եմ հայ ըլլալու»:

Երիտասարդները իրենց զգացումները խանդավառութեամբ կ'արտայայտէին եւ իրենց աչքերուն մէջ կար փայլք մը, որ կ'ըսէր՝ «Զիս ետ Հայաստան տար»:

Գալով Էմիլի Սիկալասին, ինք շատ լսած էր ցեղասպանութեան մասին, բայց մանրամասնութիւնները բնաւ չէր գիտեր:

«Երբ Ծիծեռնակաբերդի թանգարանը այցելեցինք, շատ ազդուեցայ, մանաւանդ երբ նկարները տեսայ իրենց բացատրութիւններով, անդրադարձայ թէ որքան քաջ են հայերը եւ պայքարած յանուն հայրենիքի ազատութեան. յիշեցի նախնիներն ու իրենց ապրելու կամքը, որ զիս կը մղէ երախտապարտ ըլլալու այս կեանքին համար, որ ունիմ այսօր»:

Իսկ Աբել Յակոբեան պատմեց իրենց Էջմիածին այցին մասին՝ «Ուրախ էի, որ վերջապէս առիթը եկաւ ընկերներուս հետ այցելելու ծննդավայրս Էջմիածին եւ անոր Մայր Տաճարն ու թանգարանը, ուր բազմաթիւ գանձերու կողքին կրցանք տեսնել Ս. Գեղարդը, որմով հրեայ զինուորները ծակեցին Յիսուսի կողը: Առիթը ունեցանք նաեւ օգնելու տիկիներուն, խաղողօրհնէքի օրը, 300 քիլօ խաղող լեցնելով տոպրակներու մէջ»:

Ամենակրտսէր մասնակիցը Մարիօն էր, որուն համար ամենէն հետաքրքրական օրը Արագած լեռը բարձրանալու օրն էր՝ «Իսկապէս դժուար եւ յոգնեցուցիչ օր էր, բայց երբ 7 ժամ քալելէ ետք հասանք գագաթ, ամբողջ յոգնութիւնս գնաց: Հոն ընկերներուս հետ Եգիպտոսի դրօշակը բարձրացուցինք: Շատ հպարտ վայրկեաններ ապրեցայ»:

Անճելինա Սիմոնեան, որ իր համալսարանական ուսումը շարունակելու համար Գանատա ճամբորդած էր, մեզի հետ տեսերիզով կապուեցաւ եւ պատմեց իր յուշերը Տաթևի վանքէն եւ ճոպանուղիի պտոյտէն: Առաւել, ան կը յիշեր անմոռանալի գիշերը, որ անցուցեր էին ընկերներով Հալիճորի փայտէ տնակներով գիւղին մէջ: Ինք եւ Նարինէն շատ տպաւորուած էին Նայիրի բանակավայրի երեխաներուն հետ անցուցած ժամանակով՝ «Մեզի պատմեցին իրենց պատմութիւնը,

թէ ինչպէս Արցախէն եկած ու հաստատուած են Հայաստան. մենք իրենց համար խաղեր պատրաստեցինք եւ այնքան մտերմացանք, որ չէինք ուզեր իրարմէ բաժնուիլ»:

Վերջապէս կարգը հասած էր Global Leadership-ի երկու մասնակիցներու ելոյթին. Ռիթա Չամքէրթէնեան ընտրած էր աշխատիլ Երեւանի հաշուակալական մեծագոյն ընկերութիւններէն Great Thornton Consulting-ի մէջ:

«Շատեր ինծի հարցուցին՝ ինչո՞ւ Հայաստան ընտրեցիր սկսելու աշխատանքային կեանքիդ առաջին քայլը. պատասխանս շատ պարզ եւ յստակ էր՝ հայրենիքիս հանդէպ ունեցած սէրս» ըսաւ Ռիթան:

Իսկ Լորետանա Մկրտիչեան, որ ընտրեր էր աշխատիլ Նիւ Եորքի Cognize software-ի մէջ, իր ելոյթին մէջ ըսաւ՝ «Առաջին օրը ծանօթացման օր էր. իւրաքանչիւրը կը պատմէր իր ուրկէ եկած ըլլալը: Յետոյ ՀԲԸՄԻ մասին կարճ տեղեկութիւններ տուին եւ երբ յայտնեցին թէ հիմնադրուած է Գահիրէի մէջ, բոլորը մէկ ինծի նայեցան, կարծես ես հիմնած ըլլայի: Այդ վայրկեանին շատ հպարտ զգացի որ եգիպտահայ եմ. հոն գիտցայ

թէ որքան հարուստ եղած է մեր գաղութը իր ղեկավարներով եւ յայտնի դէմքերով»:

Ծրագիրը բաժնուած էր երեք մասի՝ մասնագիտական, մշակութային եւ ընկերային: Երիտասարդները առիթ ունեցան զարգացնելու իրենց ուսման գիտելիքները եւ գործնական գետնի վրայ իրականացնելու զանոնք, ինչպէս նաեւ փորձառու մասնագէտներէ օգտուելու կողքին, կրցան նոր բարեկամութիւններ մշակել, տարբեր գաղութներէ եկած երիտասարդներու հետ:

Մենք, իբրեւ ՀԲԸՄԻ Եգիպտոսի վարչականներ, մեր երիտասարդներուն յաջողութիւն կը մաղթենք իրենց ապագայի քայլերուն մէջ, քանի որ իրենք են մեր յոյսն ու ապագան:

Այս առիթով ըսենք նաեւ, որ արձանագրութիւնները գալիք տարուան՝ 2024-ի Global Leadership ծրագրին համար բացուած են. դիմումներ կ'ընդունուին Պոսթընի, Նիւ Եորքի եւ Երեւանի համար: Ժամկետը մինչեւ 10 Նոյեմբեր 2023 է: Մանրամասնութիւններու համար պէտք է դիմել ՀԲԸՄԻ-ի կայքին:

Յաջողութիւն մեր երիտասարդներուն:

Լալա Շամամեան-Նիկոլեան





AVC-ի 10-ԱՄԵԱԿԸ

Այսօր Եգիպտոսի ՀԲԸՄ-ը հպարտ է նշելու AVC-ի 10-րդ ամեակը, որ սկիզբ առավ 2013-ի Սեպտեմբերին, Գահիրեի ՀԲԸՄ-ի հովանաւորութեամբ, նախ սկսելով ճատրակի դասընթացներով, որոնց յաջորդեցին հայերէն լեզուի դասընթացները, 2016-ին:

Գահիրեի ՀԲԸՄ-ի ատենապետ Տքթ. Վիգէն Ճիզմէճեանի ժառանգութիւնն է որ տակաւին կը շարունակենք պահել եւ ակտիւ զարգացնել՝ Աննա Թրայեանի խորհուրդներով, Ասիա Սիմոնեանի գլխաւորութեամբ եւ հրաշալի ուսուցիչներու ջանքերով:

Հինգշաբթի, 19 Հոկտեմբեր 2023-ի



Երեկոյեան Լալա Շամամեան եւ Սիլվա Սիմոնեան, իրենց ուսանողներուն նախորդ շրջանի վկայականները բաժնեցին, մտերմիկ մթնոլորտի մը մէջ:

Նոր Հրատարակութիւն

ԱԼ. ՍԱՐՈՒԽԱՆԻ «ԴԻՄԱՆԿԱՐՆԵՐ ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱՅԷՆ»

Վերջերս՝ 2023-ի Հոկտեմբեր ամսուն Գահիրեի ՀԲԸՄիութեան Ս. Չագըր Հիմնադրամին միջոցով լոյս տեսաւ Ալ. Սարուխանի «Դիմանկարներ Աղեքսանդրիայէն» գիրքը, որ յիշատակի եւ յարգանքի տուրք մըն էր Ալ. Սարուխանի ծննդեան 125-ամեակին: Գիրքին հրատարակութիւնը կատարուած է միասնաբար «Երգիծանկարչութեան Յիշողութիւնը» ծրագրին, որուն հիմնադիրը՝ Ապտալլա Սաուի հեղինակն է այս գիրքին:

ՀԲԸՄիութեան անունով գրուած Յառաջաբանին մէջ լայն գիծերով կը յիշուի Սարուխանի կենսագրականը, ապա մանրամասնօրէն կը նկարագրէ երգիծանկարչին Վիեննայէն Եգիպտոս՝ նախ Աղեքսանդրիա, ապա Գահիրէ հասնիլը:

«Իր ուշիմութեամբ եւ համբերութեամբ, Սարուխան յաջողեցաւ կարճ ժամանակի մէջ բառնալ դժուարութիւնները, եւ իր արուեստով անմիջապէս մերուիլ Եգիպտոսի հարցերուն, դառնալով խօսնակը ժողովուրդին պարզ, համեստ դասակարգին, իսկ մշակոյթի գործիչներուն եւ պետական մարդոց փնտռուած եւ յարգելի

անձնաւորութիւնը, որուն համար իրապէս յորջորջուեցաւ Եգիպտոսի երգիծանկարչութեան ռահվիրան»:


Հեղինակը կ'անդրադառնայ նաեւ Սարուխանի ուժեղ հայրենասիրութեան իր հայրենիքին, Հայաստանի հանդէպ, որուն հարցերուն եւ հայ ժողովուրդին հոգերուն նուիրած է բազմաթիւ գործեր:

ՀԲԸՄիութիւնը նախապէս Սարուխանի նուիրուած երկու հատորներ հրատարակած է՝ «Աղեքսանդր Սարուխան 1898-1977», նուիրուած Սարուխանի ծննդեան 100-ամեակին, արուեստագէտ-երաժիշտ Հրանդ Քէշիշեանի հեղինակութեամբ լոյս տեսած 1998-ին, եւ «Սարուխան ... Անյայտ Սկիզբներ» Ապտալլա Սաուիի հեղինակութեամբ, լոյս տեսած 2019 թուականին:

Հեղինակը՝ Ապտալլա Ալի Էլ-Սայէտ Էլ-Սաուի ծնած է 1984 թուականին Եգիպտոսի Էլ-Պըշէյրա շրջանը:

Պսակաւոր է Պատմութեան եւ Եգիպտական եւ Իսլամական հնագիտութեան, վկայուած Տամանհուրի համալսարանէն 2005 թուականին:

Հեղինակ է երգիծանկարչութեան



նուիրուած մէկէ աւելի գիրքերու:

Ինքն է որ սկսեր է «Եգիպտական Երգիծանկարչութեան Օր»ը, որ կը նշուի ամէն տարի, Մարտ 25-ին:

Սարուխանի գործերուն իր հանդիպման եւ ծանօթութեան մասին խօսելով հեղինակը կ'ըսէ, թէ առաջին իսկ հանդիպումէն մեծ սիրով կ'ապուեր է այս ինքնուրոյն երգիծանկարիչին հետ, ոչ միայն իր ստեղծագործական անսահմանութեան, կամ առաջին տպաւորութեան զօրութեան, այլ որովհետեւ «Սարուխանի գործերը բացուած հանք մըն էին» իրեն համար:

Կ'ըսէ նաեւ, թէ հակառակ որ շատեր հեգնանքով զինք Ապտալլա Սարուխան սկսեր են կոչել, ինք սակայն հպարտութեամբ կը կրէ այդ ածականը իր կուրծքին որպէս շքանշան, որովհետեւ ինքզինք գլխաւոր պահապաններէն մին կը զգայ Սարուխանի արուեստի ժառանգութեան:

Մեծ եռանդով պատրաստուեր է հեղինակը Սարուխանի ծննդեան 125-ամեակի հանդիսութիւններուն, որոնք, ինչպէս ինք կ'ըսէ, «հաւանաբար իր վերջին գործունէութիւնը ըլլայ եգիպտական երգիծանկարչութեան պահպանումի ասպարէզէն ներս», զոր կը զգայ թէ այնքան ալ հեռու չէ:

Հակառակ երկար տարիներու ցուցադրութիւններուն եւ հրատարակուած պատկերագիրքերուն, Սարուխան կը շարունակէ զարմացնել իր անակնկալներով, ինչպէս օրինակ Աղեքսանդրիոյ մէջ կայացած ցուցահանդէսը 1927 թուականին:

Այս ցուցահանդէսին 140 դիմանկարներ

ցուցադրուած են, որոնք վերատպուած են այս գիրքին մէջ:

Դիմանկարները, որոնք բոլորն ալ միագոյն են, թէեւ կարգ մը նկարներու բնագիրները գունաւոր եղած են, բոլորն ալ, ջախջախիչ մեծամասնութեամբ հայերու կը պատկանին, հայեր, որոնք կարելորդեր ունեցեր են Աղեքսանդրիոյ հայ գաղութի կեանքին մէջ, եւ որոնք այսօր գրեթէ մոռցուած են:

Հեղինակը լայն ակնարկով մը կը ներկայացնէ դիմանկարներու արուեստը, անոնց ծագումն ու պատմութիւնը, եւ առաջին դիմանկարները կը վերագրէ Եգիպտոսի, մանաւանդ Ֆայյումի մոմիաներու մահադիմակներուն:

Ապա կ'անցնի երգիծական դիմանկարներու ժանրին եւ կը բնութագրէ զանոնք մանրամասնօրէն:

Իր գրութեան վերջին բաժնով հեղինակը կը ներկայացնէ 1927 թուականի Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ մէջ տեղի ունեցած դիմանկարներու ցուցահանդէսը, որմէ ետք կը նկարագրէ Սարուխանը որպէս մարդ եւ մանրամասներ կը վերբերէ անոր կեանքէն:

«Դիմանկարներ Աղեքսանդրիայէն» հատորը լոյս տեսած է Եգիպտոսի ՀԲԸՄԻ «Ս. Չագըր» հիմնադրամին միջոցներով: Արաբերէն յառաջաբանին թարգմանութիւնը կատարած է Ալ. Սարուխանի թոռնուհին՝ Սիլվա Ներետեան-Բլատեանը:

Հատորը փոքր չափի է՝ 15x21 cm. եւ կը հաշուէ 52 անգլերէն եւ 208 արաբերէն էջեր:



ՊԱՏԱՌԻԿՆԵՐ ԳՐԻԳՈՐ ՀԱՄԲԻԿԵԱՆԷՆ (ՌԱՌԻԼ ԲՕՆՇՕՆ)

Գրիգոր Համբիկեան (Էտիրսէ, 1886 – Գահիրէ, 1953) առաւելաբար յայտնի Ռաուլ Բօնշօն գրական անունով, իր աշխատակցած կամ խմբագրած թերթերուն մէջ նաեւ Ատոնիս, պարզապէս Բօնշօն, Գ. Հ., Գիմ Հօ, Կադմոս, Համբիկ, Մալէշ, Մօթէօր, Նեմզար Հանըմ, Ռ. Բ. ստորագրութիւններով՝ արտադրած է արձակ եւ չափածոյ երգիծական գործեր:

Հեղինակած է «Ռաուլ Բօնշօնի Ոտանաւոր Կաղանդչէքները Ամէնուն» 48 էջանի գրքոյկը (Պոլիս, 1911), որուն աւարտին տեղադրուած հետզհետէ հրատարակելի գործերու ցանկին մէջ կը նշուին հետեւեալ խորագրերը՝ «Գօգոզագիտութիւն», «Բոգաշխարհ», «Կարմիր Լապտերը (Ապրուած վէպ Եւնի-Չարշիի փողոցէն)», «Մեր Էշերը» եւ «Մարդ, Հայվան եւ Ընկ. (Խորաթափանց ուսումնասիրութիւն ազգային բարքերէ)»: Տարի մը անց, 1912-ին, Գահիրէ հրատարակուած «Գահիրէն – Գահիրէցին – Գահիրէցուին» 96 էջերէ բաղկացեալ հատորի աւարտին կը նշուի ցանկը հինգ անտիպ գործերու, որոնց համար կ'ըսուի. «... պատուի² մը անկիւնը, շապիկի մը եւ գուլպայի մը կողքին փոշոտած, մեկենասի մը կը սպասեն, ինչպէս՝ տունը մնացած աղջիկ մը՝ էրիկի»³:

Այդ գործերուն խորագիրները կամ անոնց կցուած ենթախորագիրները եւս գաղափար մը կու տան Համբիկեան երգիծողին հետաքրքրութիւններուն եւ համարձակութեան ու ծաղկեալ երեւոյթներու կամ ենթականերու մասին. –

Ամբակում Աղա եւ Օթէլ Քօնթիսանթալ. Արաբկիրցի սառաֆի մը մեղրալուսինը
Ժառտէն տը Բառի, Կրիյում եւ Էզպէքիէ. Եգիպտահայ հովարպայապատում
Մէթրէսները. Եգիպտահայահարստակենսագայթակղապատում
Աղանուռի Սրբազանին եօթը ամուլ տարիները. Փարաւոնի եօթը կովերու երագին մեկնութիւնը

Հրատարակած է նաեւ «Վկայութիւն» խորագրեալ 158 էջանի երկը (Գահիրէ, 1947):

Իրմէ հրատարակուած գործերու շարքին մաս կը կազմէ Պոլիս լոյս տեսած թարգմանութիւն մը՝ ֆրանսացի արձակագիր եւ հրապարակագիր Միշէլ Զէվագոյի ստեղծագործութիւններէն, *Կարտինալին Մէթրէսը*⁴. Ժողովրդական թոյն-դաշոյնական մեծ վէպ, խորագրով, տպագրութիւն «Կավոշ», 1911:

Հիմնադրած-խմբագրած է «Լեպլեպիճի» (Պոլիս, 1911) եւ «Մալէշ բայ ոչ՝ ՊԵԼԷՇ» (Գահիրէ, 1912) երգիծաթերթերը: Համախմբագրած է ընդամենը չորս թիւով լոյս տեսած «Խառնաշօ» շաբաթաթերթը (Գահիրէ, 1915): Աշխատակցած է Պոլսոյ «Հանրագիտակ» եւ «Կավոշ» (ըլլալով նաեւ անոր պատասխանատու տնօրէնը), Գահիրէի «Արշալոյս», «Լուսաբեր-Արեւ», «Արեւ», «Սաւառնակ» թերթերուն: Թէոդիկ կը նշէ թէ Համբիկեան 1908-ին կոչուած է խմբագրելու Պոլսոյ «Ծաղիկ» երգիծաթերթը, զոր

¹ Բ[ախտիար] Մ. Յովակիմեան, *Հայոց Ծածկանունների Բառարան*, Երեւանի Համալսարանի հրատարակչութիւն, Երեւան, 2005, էջ 639:

² Ճամպրուկ (թրք.):

³ Որքան ծանօթ ենք, այդ գործերը, ինչպէս նախապէս նշուածները, լոյս չեն տեսած: Լոյս չէ տեսած նաեւ Յովակիմեան Պօղոսեանի կողմէ նշուած այլ անտիպ հատոր մը, ուր Համբիկեան ամփոփած կը թուի ըլլալ իր չափածոյ գործերու ընտրանին:

⁴ Հոմանուիին (\$րնս.):

երուանդ Օտեան եւս խմբագրած է պահ մը, բայց թերթը ամսէ մը դադրեցուած է գրութեան մը պատճառով⁵:

«Արեւ» օրաթերթը, որուն աշխատակիցն ու շրջան մըն ալ խմբագիրը եղած էր Համբիկեան, անոր մահուան առիթով կը գրէր թէ բոլոր զինք ճանչցողները կրցան գնահատել իր մէջ «անզիջող պայքարասիրութիւնը բոլոր անոնց հանդէպ որոնք հայուն հայրենիքը նուաստացնելու, հայրենասիրութիւնը շահագործելու, ազգասիրութեան մէջ հաշիւ եւ նկատում խառնելու, բիրտ ոյժով մարդոց ամրակուռ համոզումները խախտելու, ազգային գործերու մէջ շահախնդրութիւն եւ կողմնակցութիւն դնելու հետամուտ եղան: Կեանքի տխուր երեւոյթներէն դառնացած իր հոգին՝ վատը, շահախնդիրը, թուլամորթը հեգնելու բուռն մարմաջ մը կը զգար շարունակ: Արտաքնապէս ... [իր] երգիծանքը պարզ եւ զուարթ ձեւով ներկայացուած է. բայց անոր հեգնութեան դառնութիւնը կ'իջնէր իր գրածին խորը ու անհրաժեշտ էր խորհրդածել եւ որոնել, գտնելու համար ծիծաղելու ձգտող տողերուն տակ թաքնուած ճշմարտութիւնները»⁶:

Աշխատած է Զակազիկի Կամսարական ծխախոտի տան ապա Վակոն Լի ընկերութեան մօտ: Վերջինիս մօտ իր կեանքը տանելի ընելու համար, Յովհաննէս Պօղոսեանի վկայութեամբ, իր «պիւֆէի սեղանը վերածած էր գրասեղանի», որովհետեւ գիրը, գրական աշխատանքն էին զինք լիաթոք շնչելու մղող տարրերը⁷:

Պօղոսեան նաեւ կը նշէր. «Համբիկեան պայքարող էր ու վիճասէր: Անտեղիտալի՝ իր համոզումներուն մէջ: Գաղափարի մարդ՝ ամենէն առաջ, ու երբեք շահասէր: Գիտէր թէ շատ հակառակորդներ ունէր ու քիչ բարեկամներ: Իր կեանքին դառնութիւնները կը տանէր տէրվիշի մը համակերպութեամբ ու գրեթէ անյիշաչար ոգիով կուլ կու տար անարդարութիւնները, որոնք սակայն իր էութիւնը կը փոթորկէին եւ կը սարսէին իր առողջութիւնն ալ»:

Դարձեալ Պօղոսեանի վկայութեամբ, այդ անյիշաչարութիւնը Համբիկեանը մղած էր հրապարակային գայթակղութեան չվերածելու իր հակառակորդներուն իր դէմ սարքած մահափորձը...:

Իր նկարագրին դրական մէկ ապացոյցը կրնայ ըլլալ նաեւ, իբրեւ ռամկավար իր լծուիլը հիւծախտի զոհ դաշնակցական երգիչ-խմբավար Լեւոն Պօղոսեանին համար շիրիմ մը ապահովելու ճիգին:

Ստորեւ ներկայացուող նամակները մէկ մասն են Համբիկեանէն Մաղաքիա Արք. Օրմանեանի (1841–1918) ուղղուած նամակներու, որոնք կը պահպանուին ՀԲԸՄ-ի Փարիզի Նուպարեան Մատենադարանին մէջ: Անոնց ամբողջութիւնը ի յայտ կը բերէ Օրմանեանի ջերմ պաշտպան մը, իսկ այստեղ հրապարակուածները կը պարզեն պաշտօնականէ մտերմականի վերաճած յարաբերութիւն մը ընդմէջ նամակագիրին եւ Պոլիսէն հեռանալով Եգիպտոս հանգրուանած Բօնշօնի բարեխօս կանգնած Օրմանեանի՝ երբեմնի պատրիարք Թուրքիոյ հայոց եւ թեկնածու Ամենայն Հայոց Կաթողիկոսական Աթոռին (1911): 1913-ին, Օրմանեան առաջնորդ պիտի ընտրուէր Եգիպտոսի թեմին, բայց պիտի մերժէր ընդունիլ այդ պաշտօնը:

Նամակները նաեւ գաղափար մը կու տան 1906-ին Պոլսոյ Կեդրոնական Վարժարանի ընթացքն աւարտած Համբիկեանի արդէն ծեւաւորուած երգիծագրական

⁵ «Ամէնուն Տարեցոյցը», Դ. տարի, 1910, էջ 22:

⁶ Յովհաննէս Պօղոսեան, «Մեկնողները՝ Գրիգոր Համբիկեան», «Արեւ», ԼԹ. տարի, թիւ 10,649, 22 Դեկտեմբեր 1953:

⁷ «Արեւ», ԼԹ. տարի թիւ 10,666, 13 Յունուար 1954,



շնորհքին, անտեսուածներու հանդէպ հոգատարութեան եւ անոր կեանքի եգիպտական հանգրուանի առաջին քայլերուն ու եգիպտահայ կեանքին մասին:

Բնագրերը վերարտադրելու պահուն կատարած ենք կէտադրական հպումներ եւ շեղագրած ենք կարգ մը անուններ եւ բառեր:

Վաչէ Ղազարեան

* * *

Ամենապատիւ

S. Մաղաքիա Արք. Օրմանեան

Նախ[կին] Պատրիարք Հայոց

Սրբազնաշնորհ Հայր,

Նամակաբեր պարունը մէկն է Ատանայի ամենէն աւելի արկածեալներէն, կորսնցուցած ինչք եւ ընտանիք ամէն: Այս անգամ մտադիր է եղեր իր հայրենիքը՝ Քեսապ վերադառնալ. որուն որ գացեր է վնասներ են հայրաքար, Պատրիարքարանը մէհիտ⁸ մը դրեր է ձեռքը, իսկ շոգենաւը 2 կը պահանջէ կոր եղեր: Եկեր է վրաս եւ ոտքերուս իյնալով իր մարմնին մերկութիւնը ցոյց կու տայ:

Վստահ ձեր բարեգութ սրտին, յանուն մարտիրոսութեան, սրբազան հայր, կը խնդրեմ որ բարեհաճիք մէհիտ մը նուիրել իրեն: Գոնէ օտարներուն առջեւ անուասարկ չըլլանք: Եթէ ես ունենայի, սիրով պիտի տայի:

Անշուշտ դուք աւելի կրնաք լաւ հասկնալ որ իրաւ արկածեալ խեղճ մըն է:

Կանխաւ յայտնելով իմ շնորհակալիքս որդիական,

Մատչելով ի համբոյր աջոյդ սրբազան

Մնամ խոնարհ որդի

Գրիգոր Համբիկեան

Կ. Պոլիս 12/4/910

* * *

Յաջորդ նամակը՝ 21 Մայիս 1910-ին դարձեալ գրուած Պոլիս, նուազ պաշտօնական ձեւով, կը բովանդակէ խնդրանք մը, որ Օրմանեան գնէ իր դրկած 2 ղուրուշնոց կամ դահեկաննոց 10 տոմսերը՝ օժանդակութիւն բերելու «հանգուցեալ երգիչ Պողոսեանի»⁹ շիրմին ի նպաստ», աւելցնելով. «Վստահ եմ որ Ձեր Հայրական սիրտն ալ ի գութ պիտի շարժի յիշատակին առջեւ մէկու մը որ շնորհիւ հայ ազգին ... անօթութենէ մեռաւ»:

Համբիկեան այս նամակն ստորագրած է իր գրական անունով՝ Ռաուլ Բօնշօն:

* * *

Համբիկեանի 23 Մայիս 1911 թուակիր նամակէն կը պարզուի թէ ան Գահիրէ է արդէն, իբրեւ հասցէ նշելով «Մազմանեան բոսթ րէսթանթ՝ Գահիրէ, Էփիք»:

⁸ Օսմանեան դրամական միաւոր:

⁹ Լեւոն Պողոսեան (1883–1910), ռուսահայ երաժշտահան-երգիչ եւ հիմնադիր քառաձայն երգչախումբի, որ, ըստ Թեոդիկի, «թրթռացուցած էր շատ մը բեմերէ յեղափոխական եւ հայաշունչ խանդերգեր եւ աշուղի նուագներ», հիւժախտէ մահացած էր Պոլսոյ Ս. Փրկիչ Ազգային Հիւանդանոցին մէջ («Ամենուն Տարեցոյցը», Դ. տարի, 1910, էջ 74):

Կը տեղեկացնէ Օրմանեանի յանձնարարագիրներուն շնորհիւ «պանդուխտի տխրութիւնը» մոռցնել տուող «բարեկամական տաք մթնոլորտ մը» գտած ըլլալը իր շուրջ:

Կը յուսայ Ճանիկ Չագըրի¹⁰ եւ ուրիշի մը շնորհիւ գործ մը ձեռք ձգել, մինչ այդ գրօսաշրջութիւն ընելով եւ Գահիրէի «լայն եւ ընդարձակ պողոտաները չափչփելով», յուսալով շուտով «չորս պատի մը մէջ բանտարկուիլ»:

Կ'աւելցնէ.

Գրեցի մերիններուն որ Նորատունկեանէն¹¹ Պօղոս Փաշային¹² յանձնարարական մը ձեռք ձգեն. եթէ յաջողիմ, ինծի համար շատ լաւ պիտի ըլլայ:

Պ. Ճանիկը լաւ գործ գտաւ թէեւ, բայց անգլիերէնի պէտք կայ, ուստի սկսայ դաս առնել գիշերները, կը յուսամ որ քիչ ատենէն յաջողիմ ինքզինքս հասկցնելու եւ հասկնալու չափ բան ձեռք ձգել:

Սրբազան, հոս ահագին թիւով համակիր ունիք, ամէնքն ալ սքանչանօք խօսեցան ձեր վրայ, դատին մասին հեւհեւ լուր ուզեցին ինէ¹³: Զօպանեանին Անահիպին¹⁴ վերջին թիւը տեսաք անշուշտ, սքանչելի գրուածք մը ունէր ձեր

¹⁰ Ճանիկ Յայկ Չագըր (1879–1955) Պոլսոյ Ռոպերթ Գոլէճի ընթացքն աւարտելէ ետք պաշտօնի անցած էր Վակոն Լի (Wagons-Lits) միջազգային ընկերութեան մօտ եւ հետագային դարձած անոր Եգիպտոսի եւ Պաղեստինի ընդհանուր տնօրէնը: Ազգային գործունէութեան գծով, պիտի դառնար ԶԲԸՄ-ի Եգիպտոսի Կեդրոնական Յանձնաժողովին ատենապետը, որ շրջան մը կը կատարէր Բարեգործականի Միջին եւ Ծայրագոյն Արեւելքի երկիրներու մարմիններուն առաջնորդութիւն տուողի դեր՝ իբրեւ միջանկեալ օղակ անոնց եւ Փարիզ հաստատուած Կեդրոնական Վարչական Ժողովին միջեւ: Ծանօթ՝ Նաեւ իր անունը կրող հրատարակչական հիմնադրամով, որուն շնորհիւ անցնող քանի մը տասնամեակներուն լոյսին եկած են կարեւոր աշխատութիւններ:

¹¹ Գաբրիէլ Նորատունկեան (1853–1936), Օսմանեան պետութեան առևտուրի ապա արտաքին գործոց երբեմնի Նախարարը, որ հետագային Պօղոս Նուպարի հետ պիտի գործակցէր որպէս Յայ Ազգային Պատուիրակութեան անդամ (Նաեւ՝ Նախագահ) եւ ԶԲԸՄ-ի Կեդրոնական Վարչական Ժողովի անդամ: Նորատունկեան 1910-ին ատենապետն էր Ազգային Երեսփոխանական Ժողովին եւ այդ դիրքին վրայ պիտի մնար մինչեւ օսմանեան կառավարութեան կողմէ Ազգային Սահմանադրութեան լուծարումը Տեղասպանութեան Նախօրեակին:

¹² Պօղոս Նուպար (1851–1930), հիմնադիր Նախագահը Յայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան, որ 1912-ի վերջերուն Ամենայն Յայոց Կաթողիկոսէն պիտի Նշանակուէր Նախագահ Յայ Ազգային Պատուիրակութեան եւ տասնամեակ մը ամբողջ այդ դիրքով պիտի հետապնդէր հայկական իրաւունքներու ճանաչումն ու ձեռքբերումը մեծ պետութիւններու կողմէ:

¹³ Օրմանեան, իր զանազան արժանիքներով մէկտեղ, եղած է խնդրայարոյց դեմք մը, որուն դեմ հրատարակուած են գրքոյկներ ու յօդուածներ, իսկ Ազգային Երեսփոխանական Ժողովին մօտ կատարուած էին հաշուական եւ վարչական բնոյթի ամբաստանութիւններ, որոնց քննութեան համար կազմուած էր խորհրդարանական յանձնաժողով մը: Ամբաստանութիւններուն մաս կը կազմէին Օրմանեանի՝ Ազգային Սահմանադրութիւնը կէտ առ կէտ չգործադրելն ու ուխտադրուծ ըլլալը, ընդդիմախօս ժողովականներու սպառնալը, ազգին ցաւերուն հանդէպ անկարեկիր գտնուիլը, ըստ կամս տնօրինութիւններ ընելը, եւ այլն: Երկար քննարկումներէ ետք, երեսփոխաններ Դաւիթ Տէր Մովսէսեանի եւ Պետրոս Խօճասարեանի ներկայացուցած բանաձեւը առաւելագոյն քուէներ ստացած ըլլալով Ազգային Ժողովի 21 Դեկտեմբեր 1912/2 Յունուար 1913 Նիստի ընթացքին, Օրմանեան անպարտ պիտի արձակուէր: Մինչ այդ, 1910-ին, Օրմանեան պատրաստած էր երկպարակ հրատարակութիւն մը ի պաշտպանութիւն իր դատին՝ *Յիշատակագիրք Երկրտասանամեայ Պատրիարքութեան* խորագիրով:

¹⁴ Փարիզի մէջ «Յայ Մշակոյթի Դեսպան» անուանուած Արշակ Զօպանեան (1872–1954)՝ բանիբուն ազգային գործիչ եւ բազմարդիւն գրագետ-խմբագիր, իր հիմնադրած եւ խմբագրած «Անահիտ» պարբերաթերթին մէջ Օրմանեանին որպէս կաթողիկոսական թեկնածու համակիր չըլլալով հանդերձ, գրած էր, ի միջի այլոց. «Իսկ այն պատկառելի ալեւոր ծերունիին, որ Օրմանեան սրբազանն



սրբազնութեան վրայ: ... Հոս տեղ ազգային կեանքը շատ թոյլ գտայ, *Լուսաբեր Արեւն*¹⁵ խեր¹⁶ չկայ, ինքսին մահամերձ թերթ մը: *Արշալոյսն*¹⁷ հրաւեր ստացայ. տեսնենք: Դպրոցը արձանագրուեցայ պաշտօնի համար, տեսնենք Ծալեանը¹⁸ ինչ պիտի ընէ:

Սրբազանս, կը խնդրեմ որ իմ կողմէս եւս խորին շնորհակալութիւն յայտնէք Պ. Ճանիկին, որ շատ աշխատեցաւ եւ կ'աշխատի [օգնելու համար ինծի]. պակասներս¹⁹ այսօր ստացայ տակաւին...:

* * *

5 Յուլիս 1911-ին, Համբիկեան յայտնելէ ետք թէ բացիկ մը դրկած է Օրմանեանի, կ'աւելցնէ.

Աւետիսը կրկնեմ. *Լուսաբերի* խմբագրապետ եղայ, բայց ինչ խմբագրապետ, *Մէճմուա*²⁰ հասնելու պէս բան մըն է: Կա՛վոջին պապային²¹ վրայ կը խնդայի, գլխուս եկաւ. Մկրտիչեանի²² յօդուածները սրբագրէ ու թերթերէն պայաթ²³ լուր քաղէ. ժամանակ եւ տեղ ձգեն նէ, ես ալ խմբագրական պիտի գրեմ. բայց Մկրտիչեանը թողած չունի, ես ալ պայման դրի որ ուրիշի մը խմբագրականէն ետքը յօդուած չեմ գրեր:

Բայց ... միտքս դազեթաճի²⁴ մնալ չէ, ա'լ ձանձրացայ այս գործէն: ... [Նոր գործ մը] գտած է արդէն պ. Ճանիկը. Վակօն Լին²⁵, ուր պիտի մտնեմ անգլիե-

Է, անհրաժեշտ է շուտով հանել այն անարդար, աններելի խայտառակութեան ցեխէն ուր կրթերու կուրացման րոպէի մը զինք նետեցին ափ մը մարդիկ: Օրմանեան, ես համոզուած եմ, ոչ միայն չէ այն ազգատեաց, անձնամոլ մռայլ տիպարը զոր կ'ուզէն ներկայացնել, այլ՝ ունենալով հանդերձ իր թերութիւնները՝ ազգասէր լաւ հայ մարդ է, կարող քարոզիչ, հմուտ ուսուցիչ, ներհուն եւ կորովի պատմագիր» («Քրոնիկ», «Անահիտ», ԺԲ. տարի, 1911, Մայիս-Յունիս, թիւ 5-6, էջ 137):

¹⁵ «Լուսաբեր-Արեւ» անունն էր 1906-ի Դեկտեմբերին «Լուսաբեր» անունով Գահիրէ հիմնադրուած եւ շրջան մը Արփիար Արփիարեանի եւ Վահան Թէքէեանի կողմէ խմբագրուած երկօրեային, որ 1909-ին սկսած էր հրատարակուիլ իր նոր անունով, դա՛րձեալ Գահիրէ եւ իբրեւ երկօրեայ:

¹⁶ Բարիք, բայց նաեւ՝ փոխաբերաբար՝ յոյս (արաբ. եւ թրք.):

¹⁷ 1898-ին Գահիրէ իբրեւ եռօրեայ անհատական նախաձեռնութեամբ եւ Եղիշէ Թորոսեանի խմբագրութեամբ հրատարակուիլ սկսած լրագիր, որ հետագային հանրութեան պիտի ներկայանար որպէս Օրգան Ազգային Անկախ Միութեան:

¹⁸ Միկաս Ծալեան (1861–1935) Պոլսոյ ամերիկեան Ռոպերթ Գոլէճէն շրջանաւարտ, դասագիրքերու հեղինակ եւ կոչումով ուսուցիչ-դաստիարակ, որ 1911–1913 տարիներուն կը պաշտօնավարէր Գահիրէի Գալուստեան Ազգային Վարժարանին մէջ:

¹⁹ Ուղեգոյքերս (ֆրնս.):

²⁰ Համբիկեան նկատի ունի «Մէճմուայը Ախպար» հայատառ թրքերէն թերթը, որուն արտօնատերն ու պատասխանատու խմբագիրն էր Յովհաննէս Թօլայեան:

²¹ Ակնարկութիւնը կը վերաբերի Կա՛վոջ գրչանունը որդեգրած եւ իր «Կա՛վոջ» երգիծաթերթին մէջ Համբիկեանի աշխատակցութիւնը վայելած Երուանդ Թօլայեանի (1883–1937) հօր՝ նախորդ ծանօթագրութեամբ նշուած հրատարակիչ եւ խմբագիր Յովհաննէս Թօլայեանի, որ ըստ երեւոյթին կը գտնուէր զանազան թերթերէ հինգած լուրեր քաղելու հարկին տակ:

²² Լեւոն Մկրտիչեան (1865–1932) տուեալ շրջանին պատասխանատու խմբագիրն էր «Լուսաբեր-Արեւ»-ի: Եղած էր ուսուցիչ, հնչակեան, ապա վերակազմեալ հնչակեան եւ վերջապէս սահմանադիր ռամկավար գործիչ, իսկ 1915-ին պիտի դառնար «Արեւ»-ի հիմնադիր արտօնատեր եւ աւելի ուշ մասնակցութիւն բերէր Հայ Ազգային Պատուիրակութեան գործունեութեան: Վարած է նաեւ դիւանապետութիւնը Եգիպտոսի Ազգային Առաջնորդարանին:

²³ Օթէկ, թարմութիւնը կորսնցուցած, հինգած (արաբ. եւ թրք.):

²⁴ Հրապարակագիր՝ արհամարհական երանգաւորումով (թրք.):

²⁵ Պելճիքացի Georges Nagelmackers-ի հիմնած միջազգային ընկերութիւնը, որ կը բանեցնէր գիշերելու և ընթերելու յարմարութիւններով օժտուած երկաթուղային կառախումբերու բաժնեակներ (վակոններ):



րէնս քիչ մըն ալ առաջ տանելէս ետքը, անանկ որ կը յուսամ յառաջիկայ ծմեռ լաւ դիրք մը շինել: Լրագրութիւնս ալ *սուլու սապօնա թոքունմագ*²⁶ է: Բանի խառնուած չունիմ: Միայն թէ, ձեր մասին առիթը միշտ ներկայանալուն պիտի գրեմ եւ ատոր իրենք ալ հաւանած են ու պայման դրած են այդ մասին յարգել իմ կարծիքներս, որ մասամբ իրենց ալ կարծիքն է:

Հոս տեղի դաշնակցականները սկիզբները խըլախ²⁷ ընդունելութիւն մը ըրին, բայց ետքը, երբ *Լուսաբերի* մէջ գրածս կարդացին, մաթ²⁸ եղան, ու երես [դարձուցին], ես ալ պատասխան[ով] մը լուացի զիրենք, վար զարկի թէ իրենք գաղափարի ազատութիւն չեն յարգեր եւ առաջարկեցի պատասխանել գրածիս, բայց չհամարձակեցան տղերքը, որովհետեւ հոս անոնք ակռանին թափած անձ են:

Ռամկավարները սոր իմացան հոս ըլլալս եւ իբրեւ Բերայի [ակումբի] կազմակերպիչ եւ իրենց համար ծեծ կերած՝ լաւ ընդունելութիւն ըրին եւ խնդրեցին որ իբրեւ ընկեր օժանդակեմ իրենց: Այս գործիս շատ եկաւ, որովհետեւ հոս յաջողելու համար 3 պայման կայ. կամ արաբկիրցի ըլլալ, կամ դաշնակցական ըլլալ, եւ կամ Էֆէտ Էֆէնտիմ²⁹, ձեր ըսածին պէս, դուք մեծ մարդ էք ըսել:

Սուրէն Պարթեւեան³⁰ հոս է, շատ քսուռտուեցաւ եւ պահ մը մտադրեր են *Լուսաբերը* անոր յանձնել, բայց ետքը քուէն ես շահեր եմ կաթողիկոսական ընտրութեան:

... Հա՛, քիչ մըն ալ թէլէֆօնի³¹ վրայ խօսիմ: Անանկ [Պոլսոյ նման] Ազգ. Ժողով վազէ, Պատրիարքարան վազէ չկայ. թէլէֆօնին գլուխը անցնելուս պէս Աղեքսանդրիոյ լուրերը վայրկեանին կը ստանամ գրասեղանիս գլուխը. տեղէս շարժիլ անգամ չկայ: Նախ դժուար եկաւ. բայց կամաց կամաց կը վարժուիմ կոր եւ ա՛լ սկսայ խօսիլ: Պիսիքլէթ³² նստիլ ալ կը սորվիմ կոր, որպէսզի տիկ[ին] Էլիզին³³ հետ մրցիմ: Կը շնորհաւորեմ [ձեր] անձրեւը, ցեխը, ծիւնը. հոս անանկ բան չկայ:

Ա՛լ կարճ կապեմ, փորս անօթի է, զիլ կը չալէ³⁴ կոր, քիչ մը բան ուտեմ եւ քաֆէ լա թէ երթամ ազգային ջոջեր տեսնելու:

* * *

Ստորեւ ճաշակ մը Բօնջօնի «Գահիրէն – Գահիրէցին – Գահիրէցուհին» հատորէն:

²⁶ Ձուրն օճառին չի հպիր (թրբ.): Փոխաբերաբար՝ բռնազբօսիկ վիճակ:

²⁷ Աղուոր (թրբ.):

²⁸ Մաթ ըլլալ = շշմիլ (պոսկ.):

²⁹ Այո՛, Էֆէնտիս (թրբ.):

³⁰ Սուրէն Պարթեւեան (Սիսակ Պարտիզպանեան, 1876–1921), արձակագիր, հրապարակագիր եւ խմբագիր, Եգիպտոս գտնուած շրջանին խմբագրած է «Լուսաբեր-Արեւ»ը, 1912-ին հիմնած խմբագրած է «Հոսանք» շաբաթաթերթը, եղած է 1913-ին լոյս տեսնել սկսած «Յուսաբեր»ի առաջին խմբագիրը, նաեւ՝ հիմնադիր-խմբագիրը «Եգիպտահայ Տարեցոյց»ին (1914–1918) եւ այլն:

³¹ Հեռաձայնի:

³² Հեծանիւ:

³³ Կ'ենթադրենք թէ ակնարկութիւնը կը վերաբերի Էլիզ Խօրասանճեանի՝ Համբիկեանի պոլսեբնակ զարմուհին:

³⁴ Կը նուազէ (թրբ.):



Գահիրեն

Վեհ Բուրգերու բարձրության քով կատարեալ տափակութիւն մը, Նեղոսին լործունքին առնթեր տոչորող չորութիւն մը, արեւներու ռնգունքին տակ ահռելի հնոց մը, աւազներու խորը պուտիկ մը քաղաքակրթութիւն, ծովերէն ներս Բաբելոն մը. Աւետեաց երկիր մը երբ տակաւին շոգեկառքէն չէք ելած, *Պէռլից Սքուլ* մը իր 72 ուկէս տեսակ բնակչութեան խօսած 172 ուկէս տեսակ լեզուներովը, բախտախնդիրներու քաւարանը, Սփինքսին ոտքին պզտիկ Մօնթ Գարլօ մը, յաւիտենական կանանչութեան ջերմանոցը, էշերու ցուցահանդէսը, թուրիսթներու խելապատակին Պղինձէ քաղաքը, կարմրուկ ոսկիներու կոկորդիլոսը, Անգլիական-Եգիպտական *չիֆթ խավրուլմուշ* մը, բամպակի պօրսան, Հայ Փաշաներու Վերսայլը, Ռամկավարներու օճախը, Դաշնակցականներու Դրախտ Կորուսեալը, Աղանուսի Սրբազանին Դեղին հանքը, Ազգ. Սահմանադրութեան տապանը, Արապկիրցիներու Արեւելեան Բիւռօն, կիներու բիացան, պէյերու *գացան*, Անգլիոյ աղծանը, Թուրքիոյ դերձանը, Մինաս Ծալեանին *մէհէնկ թաշին*, Մալէգեան Վահանին *domaine*-ը, Նազարէթ Աղազարմին Վեցհազարեակը, Սուրէն Պարթեւեանին Նիակարան, Կեդրոնականցիներու Սալմաստը, Եղիշէ Թորոսեանի Պատերազմական Ատեանը, Երոպայի մանրանկարը, աղտոտութեան մեծանկարը... Enfin!

Չեմ գիտեր թէ քանի՞ քառակուսի քիլօմէդր տարածութիւն ունի, բայց կրնամ ըսել ձեզի իր սահմանները՝ որոնք են՝ Հիւսիսէն՝ Գրաման Բանակ, Հարաւէն՝ Գրաման Նաւատորմ, Արեւելքէն՝ Գրաման թնդանօթ, Արեւմուտքէն՝ Գրաման Զօրանոց:

Եթէ ըսեմ Գահիրէն գեղեցիկ է, Գեղեցկութեան դէմ հայիոյած կ'ըլլամ եւ կ'ունենամ այնչափ ճաշակ, որքան կարողութիւն Եգիպտոսի առաջնորդը, սակայն սուտ խօսած չեմ ըլլար ըսելով թէ՝ Մեծ Կայարանէն մինչեւ Ապտին կոչուած հրապարակը գեղեցիկ է, ինչպէս կնոջ մը ծոծրակը, կամ թելը: Անկէ անդի՞ն՝ կ'աղաչեմ, փէշը վեր մի՛ առնէք եւ կամ պլուզը մի՛ խառնշտկէք:

Բայց, կը խոստովանիմ որ ընդհանուր առմամբ *շիրին* է...:

Գահիրեցին

Կ'ըսուի թէ Եգիպտոսի մէջ Հայերուն թիւը 12000ի կը հասնի:

Գահիրէի Հայերուն թիւը անկարելի է գիտնալ, որովհետեւ կարելի չէ վիճակագրութիւն մը կազմել: Գահիրէի մէջ Հայ կայ որ մինչեւ մեռած օրը Ֆրանսացի, Անգլիացի, կամ Ղպտի կը կարծես: Մեռելակառքին Պէյն-էլ-Սուրէնի փողոցը մտնալէն կը հասկցուի որ հանգուցեալը... Հայ է եղե՛ր:

... *Լուսաբեր-Արեւի* ծնունդը՝ շատ մը ազգութեանց ծնունդին պէս մութ է եւ անհասկնալի: *Լուսաբեր-Արեւ* շապիկ փոխելու պէս խմբագիր փոխած է, բայց երբեք ուղղութիւն, եւ եթէ ներկայիս պզտիկ փոփոխում մը կը նշմարուի անոր մէջ, պատճառը սա է թէ՝ հին էրիկը մեռած ըլլալով, *Լուսաբեր-Արեւ* նոր ամուսնութիւն մը կնքած է:

Լուսաբեր-Արեւի էն մեծ խմբագիրը եղած է Արփիար Արփիարեան, որուն մեռած ատենը գրպանէն պատառ մը չոր հաց ելած է իբրեւ... *թէրէքէ* եւ որուն դագաղին ետեւէն 20 վայրկեանի չափ քալած են փաշաներ, իբրեւ... յետին յարգա՞նք: Ո՛վ կեանքի հեգնանք...:



Գահիրեցուհին

Կեանքիս մեջ երեք անգամ քրտնած եմ սաստիկ: Առաջին անգամ Պոլիս՝ երբ ազգասէր Վերակազմեալ մը իր պրաունսինկը դպցուց քիթիս: Երկրորդ անգամ՝ երբ Աղանունի Սրբազանին մէկ քարոզը մտիկ ըրի ստիպուած, եւ երրորդ անգամ՝ երբ գրիչը ձեռք առի գիրքիս սա գլուխը գրելու համար:

Կայ ... շարք մը հայացած օտարունիներու, անոնք ալ Գահիրեցուհի են:

Այս փունջին մէջ աւագ տեղը կը բռնէ *պէլէտուհին*, տեղական ապրանք *հալիս հուլիս*, բամպակին, ֆուլին եւ եղէգին պէս:

... Պէլէտուհին աչքերը հրաշալի եւ զգլխիչ են, ածուխի պէս սեւ եւ գիշերուան պէս խորհրդաւոր, մեղք որ շատ անգամ երկուքէն մէկը գոց է, որովհետեւ երկու աղուորութիւն մէկտեղ չըլլար միշտ...:

Պէլէտուհին *ֆուլ*էն առած է երեսին գոյնը, արեւէն՝ տաքութիւնը, անապատէն՝ տափակութիւնը, բամպակէն՝ հարստութիւնը, Նեղոսէն՝ միօրինակութիւնը, *Այրալէն*՝ հաւատարմութիւնը, Ամսիրիսէն՝ նախանձը, Բուրգերէն՝ մեծամտութիւնը, աւանակներէն՝ համբերութիւնը, Տեր Մամբրէն՝ կրօնագիտելիքները...:



ԲԱՑԻԿ ՄԸ

Իր պահարանին մէջ, որուն վրայի դրոշմաթուղթը կը պակսի: Շատ հին են պահարանն ալ, բացիկը ինք ալ, որ չինական արուեստի վերարտադրութիւն մըն է, բաւական յաջող, տպուած ԱՄՆի Գալիֆորնիա նահանգին Օքլէնտ քաղաքին մէջ:

Գրուած է անգլերէնով, Ի. Րմոլտի կողմէ, Պէյրութէն, 27 Յունիս 1956-ին, կը կրէ Պէյրութի Ամերիկեան դեսպանատան հասցէն եւ ուղղուած է Սաթիին (Սաթենիկ Թոփալեան):

Ծալուած բացիկին մէջէն թերթի կտրօն մը կ'իյնայ, ԱՄՆի նշանաւոր թերթէն՝ Newsweek-էն կտրուած, դիմագիծը շատ թատերական արտաքինով պատկառազդու, բայց ժպտուն մարդու մը. գլխարկէն դատելով անգլիացի պէտք է ըլլայ:

Այս կտրօնը այնքան կը հետաքրքրէ զիս, որ նախ այդ կը կարդամ.

Ոսկեայ Պսակ – Մօրուքաւոր, թուփի նման յօնքերով, եդուարդեան վէպէ մը դուրս ինկած կերպարի նման Նուպար Կիւլպէնկեան (զաւակը ողբացեալ Գալուստ Կիւլպէնկեան քարիւղի արքային, որ աշխարհի մեծագոյն հարստութիւններէն մէկը դիզած է), ցերեկային զգեստով եւ երկար գլխարկով ներկայ եղաւ իր եղբորորդիին՝ Մայքըլ Եսայեանի եւ ժառանգորդուի ժերալտին Կինէսի պսակին, Լոնտոնի մէջ: Կիւլպէնկեան երեւցաւ օրփտէ մը լամբակին եւ պարարտ չէք մը նորապսակներուն համար (գումարը չյատարարուեցաւ): Կիւլպէնկեան նաեւ առաջարկեց որ նորապսակները իր Րոլս-Րոյսը գործածեն, բայց անոնք մեղրալուսնի գացին վարձուած ինքնաշարժով մը: «Ասիկա ահա՛ ժուժկալութիւն է» ըսաւ բարեկամ մը:

Յունիս 11, 1956

Բացիկը յաւելեալ տեղեկութիւններ կը հաղորդէ.

«Սիրելի Սաթի,

Մեծ հաճոյք էր այդ քանի մը աղուոր ժամերը անցնել քեզի հետ, քու գեղեցիկ տանդ մէջ եւ հանդիպիլ շատ հաճելի

նրբիկ Լէյտի Գամբէլին:

Մեծ ցնցում էր ինծի համար իմանալ մահը միջազգային շրջանակի իմ շատ սիրելի բարեկամներէս մէկուն: Գիտակից եմ այն մեծ ցաւին զոր կ'ապրիս¹: Քաջ եղիր, որովհետեւ դուն քու անձնական ճակատագիրդ ունիս, իսկ յիշատակը այն սքանչելի տարիներուն, զոր միասնաբար անցուցիք, քու գանձդ է:


Կը նախանձիմ քեզի այն հետաքրքրական ծրագիրներուն համար եւ բոլոր ժամերուն, զոր այդ ծրագիրներու իրագործումին համար հաճոյքով կ'ապրիս: Ինչ բախտաւոր ես նման վարպետ աշխատողներ ունենալու համար, որոնք քեզի կ'օգնեն իրագործելու քու արուեստի գաղափարներդ: Կը մաղթեմ որ յարմար պատեհութիւն մը ունենաս այդ մեծ տունը ձգելու եւ վայելելու մտերմութիւնը փոքր վիլլային, ձերբազատուելու համար այդքան մեծ կալուածի մը մտահոգութիւններէն:

Այցելեցի Ապտինի պալատը, երբ Գահիրէ կը գտնուէի եւ շատ հաճելի օր մը անցուցի Թանգարանին մէջ, ինչպէս միշտ: Հետաքրքրական փորձառութիւն մըն էր տեսնել, թէ ինչպէս մեծ դամբանի մը կափարիչը կը վերցնեն նոյն հին ժամանակներու ձեւով, ինչպէս որ ըրած են, վստահ եմ, դարեր շարունակ, մարդերու եւ տղոց երգող բազմութեամբ:

Գահիրէն նախկին ժամանակներու հմայիչ եւ հետաքրքրական քաղաքը չէ ալ: Ափսոս է որ այդքան դրամ կը ծախսուի ոչ թէ աղքատներուն, այլ բանակին վրայ եւ այլն:

Կը ներփակեմ փոքրիկ յօդուած մը ժամանակակից թերթերէն մէկէն առնուած, որ կը կարծեմ թէ կը հետաքրքրէ քեզ: Պէտք է յիշես, որ զիս ներկայացնողը Չագըրներուն այս մարդուն մօր կողմէ գրուած նամակ մըն էր, երբ Բորթուզալ կը գտնուէի 1944-ին: Ի՛նչ տարօրինակ ընտանիք մըն էին:

Թոյլ տուր լսել քեզմէ եւ պատմէ ինծի թէ ինչպէս կ'ընթանան քու փոքրիկ խա-



Նութիդ գործերը: Կը յուսամ որ Լէյտի Գամբէլ լաւ է եւ առողջ. փոխանցէ իրեն իմ լաւագոյն մաղթանքներս: Եթէ Պէյրուս

այցելէ, հեռաձայնիս թիւն է 24 553: Պիտի ուզեմ հանդիպիլ իրեն:
Ջերմօրէն՝ Ի. Րըմոյլտ

Ծանօթագրութիւն


¹ Ակնարկը Ճանիկ Չագըրի մահուան մասին է, տարի մը առաջ 1955 թուականին պատահած:

շար. էջ 10-էն →

ՄԱՐԻԱ ՔՐԻՍՏԻՆԱ ԽԱՆՃԵԱՆ

Եւս հեղինակ է Եգիպտոսի նուիրուած մեծածաւալ հատորի մը, որ կը կոչուի Libro De Oro Del Tarot Egypcio եւ կը խօսի եգիպտական պատմութեան մէջ արթարքներուն եւ թարօ բախտաթուղթերուն մասին:

ՀԲԸՄիութեան կեդրոնն ու Աղաթօն գրադարանը այցելելէ ետք, Մարիա Քրիստինա դրական եւ հաճելի տպաւորութիւններով վերադարձաւ, իր հետ տանելով Եգիպտոս կեցութեան եւ անոր հարուստ պատմութեան առնչուած անմոռանալի յուշեր:





Cité des Tentes



Թէ ինչու՞ «Վրանաքաղաք» կը կոչուէր Կիզէյի բուրգերուն անապատային բարձրավանդակին շրջանը, հակառակ որ հոն վրաններու նշոյլն իսկ չկար, այլ ցանցառ կերպով փայտէ հիւղակներ կը գտնուէին, չեմ գիտեր ...

Յամենայնդէպս յիշողութեանս մէկ լուսաւոր անկիւնը տեսերիզի նման տակաւին պահուած է այդ անյայտացած «քաղաք»ը:

Mena House հռչակաւոր պանդոկը, որ շքեղօրէն հանգչած է բուրգերուն ստորոտը, սքանչելի տեսարան կը պարգեւէ հին աշխարհի միակ կանգուն մնացած հրաշալիքներուն, սակայն Եգիպտոս կայք հաստատած օտարներէն ոմանք նախընտրած էին ճոխութիւնէ հեռու, նախնական ձեւով վայելել այդ հաճոյքը: Այսպէս, հետզհետէ մէջտեղ ելան փայտաշէն տնակներ, ուր մարդիկ կ'երթային ոչ թէ բնակելու, այլ լման օր մը անցընելու Գահիրէի աղմուկէն ու խճողումէն հեռու:

Մինչեւ հիմա տակաւին կը հիանամ տէր եւ տիկին Արամ եւ Յասմիկ Տէտէ-

եաններու խիզախութեան վրայ՝ այդ ամայի տեղը հիւղակ մը ունենալու նախաձեռնութեան: 60-ական թուականներուն, երբ Գահիրէի բնակչութիւնը հազիւ 5 միլիոնի կը հասներ, Հելիոպոլիսէն մինչեւ բուրգերը ինքնաշարժով հեզասահ կերպով շուրջ 30 վայրկեան կը տեւէր:

Բայց այդ հիւղակները զուրկ էին ելեկտրականութենէ եւ հոսուն ջուրէ ... Սակայն ինչ փոյթ, հիւրասէր Տէտէեան ամուլին հրաւերները ոչ ոք կը մերժէր: Ահաւասիկ ինքնաշարժ ունեցողները մէկիկ-մէկիկ կը հասնէին հոն, բեռնաւորուած ինքնաշարժէ զուրկ բարեկամներով, ուտելիքներով եւ ջուրով:

Մենք ալ քանի մը անգամ վայելած ենք այս իւրայատուկ հաւաքոյթները, երբ հայրիկիս ինքնաշարժին մէջ տեղաւորուելով՝ մայրիկս, մեծ հայրիկս Սարուխանը, մեծ մայրիկս, քոյրիկս եւ ես, հասած ենք Cité des Tentes:

Հիւղակը կը բաղկանար մեծ քառակուսի սենեակէ մը, որուն մէջ վերցուած կ'ըլլային ծալլուող աթոռներ, սեղաններ, հո-



վանոցներ, մեծ, հանգստաւէտ բազմոցներ ու խոհանոցի վերաբերեալ տարրական իրեր: Հիւրերէն երիտասարդները անմիջապէս գործի կ'անցնէին, հովանոցները կը պարզէին հիւղակին առջեւ ու շուքին տակ աթոռ-սեղան կը շարէին, իսկ տիկիները տուններէն բերուած ուտելիքները աչքէ կ'անցընէին:

Շուտով քանի մը պղինձէ spiritiere-ներ կը վառուէին ու սուրճի պատրաստութիւնը կը սկսէր: Տարեցներէն ոմանք նարտի կամ թղթախաղի սեղաններու շուրջ կը հաւաքուէին, իսկ մենք, փոքրիկներս, հիւղակին շուրջ վազվզելով կը խաղայինք ու ողորկ քարեր կը փնտռէինք:

Ես, որ շատ կը հետաքրքրուէի մեծերուն խօսակցութիւններով, կը տեղաւորուէի մեծ հայրիկիս քովը: Հոն էին արուեստագիտուհի տիկին Շաքէ Իփէքեանը, դաշնակարուհի օր. Նուարդ Տամատեանը, նկարիչներ տիկին Նորա Փափազեանը, պր. Աշոտ Զօրեանը, տիկին Այծեմնիկ Պոյաճեանը, լուսանկարիչ տիկին Շաքէ Ալպանը, գրագէտ պր. Խորէն Տէտէեանը, Արեւ օրաթերթի խմբագիր պր. Էտմոն Կոտալազեանը, եգիպտաբան պր. Վահէ Պոյաճեանը, որ ժամանած կ'ըլլար Հոլանտայէն, պատանի ժիրայր Փափազեանը, որ հետագային եղաւ տաղանդաւոր դերասան ու բեմադրիչ, պր. Օննիկ Ալեքսանեանը՝ Onnig of Cairo եւ շատ ուրիշ անձեր, որոնց անունները յիշողութիւնս կը դաւաճանէ:

Թէպէտ միջոցները նախնական էին, նոյնիսկ արտաքնոցը չորս կողմը վարագոյրով գոց ծակ մըն էր աւազին մէջ, սակայն դժգոհող չկար: Գաղութին մասին ի՞նչ հրատապ հարցեր կը ծեծուէին, ի՞նչ գեղարուեստական հարցերու մասին կարծիքներ կը փոխանակուէին ... Նիւթերն ու անձերը վեհ էին ու հետաքրքրական, զիրենք հեռուէն հսկող հսկայ եւ

լուռ բուրգերուն նման:

Մայրամուտին, երբ հաճելի զեփիւռ մը կը փչէր, ծնողներէն մի քանին քալելու կը տանէին փոքրիկները անապատին մէջ ու մեզի զբաղած պահելու համար, կայծքար գտնելու մրցում կ'ընէին: Սորվեցանք ընտիր կայծքարեր գտնել եւ իրարու զարնելով կայծ հանել ու կրակ վառել: Երբեմն ուղտապան մը կը մօտենար անտարբեր ու հպարտ ուղտին սանձը բռնած ու մենք կարգով սապատին նստած, կը փոխադրուէինք հեքիաթներու աշխարհ:

Մութը կոխելուն պէս կազով լապտերները կը վառուէին ու զովացած աւազին վրայ, ծածկոցի մը վրայ փռուած, ջինջ երկնակամարին վրայ աստղերը կը դիտէինք: Հոն է որ լսեցի Մեծ Արջին ու Յարդգողի Ճանապարհին մասին ու մեծ հայրիկս, Վահագնի Ծնունդին առասպելը նկարագրող քերթուածէն քանի մը տուն արտասանեց: Մթութենէն ու անդորրութենէն ներշնչուած երբեմն ոմանք կ'ասմունքէին կամ կ'երգէին: Եթէ հոն դաշնամուր մըն ալ ըլլար, իսկական գեղարուեստական երեկոներ պիտի ըմբոշխնէինք: 60-ական թուականներուն պարզ էին մարդոց պահանջները ու վեհ էին անոնց հոգիները:

70-ական թուականներուն, այլ եւ այլ պատճառներով արգիլուեցաւ Cité des Tentes երթալը: Անապատի աւազները հետզհետէ իրենց փէշերուն տակ առին լքուած հիւղակները, որոնք անվերադարձ անյայտացան բուրգերուն շրջակայքէն: Սակայն յիշողութեանս մէջ Cité des Tentes-ը գոյութիւն ունի իր արծարծած թանկագին զգացումներով:

Սօսի Ներերեան-Յակոբեան
Հոկտեմբեր 2023



ԴՈԿՏՈՐ ՓՐՈՖ. ՊԵՐՃ ԶԷՊԷՃԵԱՆ (1959-2023)

Անհուն կսկիծով մեր սիրտերուն մէջ կը մխայ այս մեծ կորուստին ցաւը՝ սիրելի գործակից եղբոր՝ դոկտոր փրոֆ. Պերճ Զէպէճեանի վաղաժամ մահը. մեկնեցաւ այս աշխարհէն անողոք հիւանդութեան պատճառով, խոր սուգի մատնելով իր ընտանիքը, հարազատները եւ Աղեքսանդրահայ ամբողջ գաղութը:



լով իր ընտանիքին եւ ազգին :

Եղած է Մանսուրայի համալսարանի Ճարտարագիտութեան կաճառին Մեքենաշինութեան Ամպիոնի ակադեմական անձնակազմին մէջ, նախ որպէս օգնական դասախօս, դասախօս, փրոֆէսոր, ապա պատուաւոր փրոֆէսոր (Professor In

The Department Of Mechanical Power Engineering):

Ամբողջ կեանքը նուիրած է հայ ազգին եւ եկեղեցիին, վարած է զանազան պաշտօններ, մաս կազմած է եկեղեցւոյ հոգաբարձութեան, ապա երկար տարիներ եղած է անոր ատենապետը:

Կեանքին վերջին շրջանին Փոխ Ատենապետն էր Աղեքսանդրիոյ Պատկառելի Թեմական Ժողովին: Եղած է Հ.Բ.Ը.Միութեան Աղեքսանդրիոյ Մասնաճիւղին Ատենապետ եւ Աղեքսանդրիոյ Տիգրան Երկաթ Հայ Մշակութային Միութեան գանձապահ:

Ողբացեալը բարութեան, ազնւութեան, համեստութեան եւ խոնարհութեան մարմնացում եղած է իր ամբողջ կեանքին ընթացքին:

Թող Աստուած Իր երկնային լոյսերուն մէջ հանգչեցնէ անոր մաքրամաքուր հոգին եւ մխիթարէ ընտանիքին եւ համայնքին բոլոր անդամները:

ՅԻՇԱՏԱԿՆ ԱՐԴԱՐՈՑ ՕՐՀՆՈՒԹԵԱՄԲ ԵՂԻՑԻ :

Յովհաննէս Զէպէճեանի եւ Արուսեակ Պետրոսեան-Զէպէճեանի կրտսեր որդին՝ Պերճը ծնած է մեծցած Մանսուրա (Եգիպտոս), հեռու հայկական միջավայրէ, բայց ժառանգած է ազգային անընկճելի կամք եւ դաստիարակուած աննկուն ոգիով: Շնորհիւ իր ծնողաց ընկալած է հայոց մայրենի լեզուն եւ պատմութիւնը, իսկ կրօնական դաստիարակութիւնը ստացած է Ղպտի Ուղղափառ եկեղեցւոյ մէջ, կիրականօրեայ վարժարան յաճախելով:

1976-1981 թուականներուն ուսանած է Մանսուրայի համալսարանի Ճարտարագիտութեան կաճառին մէջ եւ 1981 թուականին աւարտած է Մեքենաշինութեան պսակաւորի աստիճանով:

1986 թուականին Մանսուրայի համալսարանէն ստացած է Մեքենաշինութեան մագիստրոսի կոչում: Ուսումնասէր երիտասարդ, տքնաջան աշխատանքէ եւ պայքարէ վերջ, 1998 թուականին Ֆրանսայի Համալսարանէն տիրացած է վարդապետական աստիճանի, պատիւ բերե-

ՆԵՖԵՐՔԻՔԻՆ ԿՈՒՋԷ ՏՈՒՆ ՎԵՐԱԴԱՌՆԱԼ

Եգիպտոսի պետությունը կը փորձէ Գերմանիայէն վերադարձնել Նեֆերթիթի կիսանդրին, սակայն Գերմանիան կը մերժէ Եգիպտոսի պահանջը: Եգիպտոս ձեռնարկած է բոլոր պաշտօնական միջոցներով, ոչ միայն փարաւոնին կիսանդրին, այլ ապօրինի կերպով երկրէն հանուած բոլոր հնութիւնները վերադարձնելու աշխատանքին:

Գերմանացի հնագէտ Լուտվիկ Պորչարտն ու իր խումբը Նեֆերթիթին պեղած էին 1912 թուականի Դեկտեմբերին, Ամարնայի մէջ (Մինիա նահանգ), ուր կը գտնուէր քանդակագործ Թութմոզէի արհեստանոցը: Հնագէտը 1913 թուականին երկրէն դուրս հաներ է Նեֆերթիթի կիսանդրին, խախտելով այն օրերուն հնագիտութեան վերաբերեալ բոլոր կանոնները: Այն օրերուն արդէն համաձայնուած էր, որ բոլոր հնագիտական խումբերը իրենց բացառիկ գտածոները պէտք է յանձնեն Եգիպտոսի կառավարութեան, մնացեալը յանձնելով Գահիրէի թանգարանին եւ բաժնելով խումբերուն միջեւ:

Գերմանիա կը պնդէ թէ այս չքնադ կիսանդրին Պերլինի արշաւախումբին իրաւունքն էր, թէւ Պորչարտ ծածկեր է կիսանդրին, անոր արժէքը ցոյց չտալու մտադրութեամբ:

Տասնամեակներէ ի վեր Եգիպտոս Գերմանիայէն կը պահանջէ Նեֆերթիթի կիսանդրին վերադարձնել իր օրինաւոր տէրերուն:

1933 թուականին Հիթլեր կը մերժէ վերադարձնել կիսանդրին, որոշած ըլլալով զայն ցուցադրել նոր շինուելիք Germania քաղաքին թանգարանին մէջ:

1946 թուականին Եգիպտոսի եւ Սուտանի Ֆարուք Ա. Թագաւորը պաշտօնական յուշագիր մը կը յղէ Դաշնակիցներու



վերահսկողական Խորհուրդին, կիսանդրիին պահանջով:

Նոյն պահանջով 2011 թուականին Հնութիւններու Բարձրագոյն Խորհուրդի գլխաւոր քարտուղար Զահի Հաուաս պաշտօնական նամակով կը դիմէ Գերմանիոյ կառավարութեան համապատասխան մարմիններուն եւ Եգիպտոսի մէջ Գերմանիոյ դեսպանին:

Սեպտեմբեր 18-ի Գերմանիա իր այցելութեան ընթացքին Զբօսաշրջութեան եւ Հնութիւններու նախարար Խալէտ Էլ Անանի կը կրկնէ Նեֆերթիթին վերադարձնելու Եգիպտոսի պահանջը: Բայց Գերմանիան մերժած է այն բացատրութեամբ, որ այդ կիսանդրին եզակի քանդակ մըն է եւ պէտք է պահուի Գերմանիոյ մէջ:

Ճիշդ է որ Գերմանիան Անանիի յանձնած է հինգ իրեր, Եգիպտոս վերադարձնելու համար:

Անանի կրկնած է իր երկրին հետապնդումը Եգիպտոսէն անօրինաբար դուրս հանուած արուեստի հին կտորները վերադարձնելու համար:

Գերմանիոյ համապատասխան մարմիններ կը պնդեն, թէ այդ կիսանդրին կը պատկանի Պերլինի Neues թանգարանին:

Հակառակ այսքան պաշտօնական հետապնդումներուն, Պերլինի Stiftung Preussischer Kulturbesitz-ի պատասխանատուն՝ (Բրուսական Մշակութային Ժառանգութեան Հիմնադրամ) Պրիժիթ Կոպցլէր յայտարարած է, թէ «Երկար տարիներէ ի վեր Գահիրէն պաշտօնական դիմում չէ ներկայացուցած Գերմանիոյ, Նեֆերթիթի կիսանդրին վերադարձնելու առնչութեամբ», սակայն աւելցուցեր է Կոպցլէր, «Գերմանիան միշտ պատրաստ է Եգիպտոսի հետ բանակցութիւններու»:



2017 թուականի Փետրուարին Զբօսաշրջութեան նախկին նախարար Եահիա Ռաշէտի հետ հանդիպումէն ետք Գերմանիոյ դեսպան Գէորգ Լույ ըսած է, թէ նախարարը չէ կրցած համոզել զինք Նեֆերթիթի կիսանդրին վերադարձնելու առնչութեամբ, եւ աւելցուցեր՝ «Նեֆերթիթի կիսանդրին լայն տարածում ունի Գերմանիոյ մէջ»:

Հնագէտները կը կարծեն, թէ այդ թանկագին կիսանդրին Եգիպտոսի կը պատկանի եւ պէ՛տք է վերադարձնել զայն իր իսկական տէրերուն, եւ թէ Եգիպտոս կը շարունակէ համբերատար կերպով հետապնդել իր իրաւունքը:

Գերմանիան կ'ըսէ, թէ Նեֆերթիթի կիսանդրին իր իրաւունքն է, համաձայն պեղումներու եւ գտածոներու բաժանման իրաւական բանակցութեան, որ կ'ըսէր թէ գտածոներուն գլխաւոր եւ մեծարժէք կտոները երկրին կը մնան, իսկ մնացեալն որոշ տոկոս մը պեղումը խումբը

կրնայ իւրացնել: Եգիպտոս կը պնդէ, որ այդ բաժանումը խարդախուած է, որովհետեւ երբ կիսանդրին ներկայացուած է քննութեան, որոշելու համար անոր արժէքը, կտորով ծածկուած է:

1971-ի Եունէսքոյի ընդունած օրէնքները ապօրինի ներմուծման, արտահանման եւ սեփականութեան իրաւունքի փոխանցման միջոցներուն մասին, այս պարագային ի զօրու չեն, որովհետեւ յետադարձ ոյժ չունին, 1913 թուականին Գերմանիա տարուած այս կիսանդրին պարագային:


Եգիպտոս կրցած է ապացուցել, որ Նեֆերթիթի կիսանդրին անօրինական կերպով Եգիպտոսէն հանուած է եւ գողցուած կը համարուի: Հետեւաբար՝ պէ՛տք է վերադարձուի. բայց բանակցութիւնները, որոնք կը շարունակուին, ժամանակ կը պահանջեն: Եգիպտոսը բնա՛ւ չի զիջիր կիսանդրին տէրը ըլլալու իր իրաւունքը:



ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ

Մոնթրեալի Ս. Յակոբ եկեղեցույ մէջ կատարուել է օրինութիւնը Սուրբ Յակոբի գեղանկարին, որուն հեղինակը եգիպտահայ դեռատի նկարչուի Ռիթա Գեորգեանն է:



ՎԱՆ ԼԷՕ Ի ՊԱՏՈՒԻ

Յուլիս 15 - Նոյեմբեր 5 երկարող շրջանին, UCLA համալսարանի Համմըր թանգարանին մէջ (Hammer Museum, UCLA) կը ներկայացուի եգիպտահայ լուսանկարիչ Վան Լեոյի (Լեւոն Պոյաճեան 1921-) յետահայեաց ցուցահանդէսը, որ կը պարփակէ սկիզբէն՝ 1930-ականներէն մինչեւ 1990-ի ժամանակաշրջանի իր աշխատանքները:



ԱՒԱՐՏԱՃԱՌ

Վերջերս Պաղտատի (Իրաք) համալսարանէն ներս Մուսթաֆա Մուհսէն Քազէմ պաշտպանեց իր աւարտաճառը, որուն նիւթն էր «Հայերը Եգիպտոսի մէջ Ֆաթիմիտ եւ Այյուպիտ ժամանակաշրջաններուն»: Աւարտաճառը կը ներկայացնէ այդ շրջանի եգիպտահայերուն ընդհանուր վիճակը, պատմութիւնը, կրօնը, աւանդութիւններն ու քաղաքականութիւնը. ինչպէս նաեւ կը մանրամասնէ անոնց արմատներուն եւ գաղթաշարժերուն պատմութիւնը, կը ներկայացնէ մանաւանդ անոնց ներդրումը Եգիպտոսի կեանքին մէջ:

Աւարտաճառը ներկայացուած է «Իսլամական Պատմութեան Փիլիսոփայութիւն» ճիւղին մէջ վարդապետական աստիճանի տիրանալու համար,:

50-ԱՄԵԱԿ

Մահուան յիսնամեակն է սփիւռքահայ խիզախ հրապարակագիր, խմբագիր, գրող եւ հասարակական գործիչ Սիրան Զարիֆեանի (ՍԵԶԱ), որ քոյրն էր արեւմտահայ վերջին բանաստեղծներէն Մատթէոս Զարիֆեանի եւ հիմնադիր-խմբագիրը «ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅՈՒՀԻ» հանդէսին:

Շուտով Երեւանի մէջ լոյս կը տեսնէ Սեզայի հարուստ նամականիին Ա. հատորը՝ նամակագրութիւնը Վահէ-Վահեանի եւ Անդրանիկ Ծառուկեանի հետ:





ՅԱՂԹԱՆԱԿ

Quantum College-ի 12-րդ դասարանի աշակերտ Ք. Աբրահամյան յաղթական հանդիսացեր է Կիրառական քիմիագիտության միջազգային ոլիմպիականին, որուն մասնակցած էին 9 երկիրներէ 92 մրցակիցներ: Հայաստան առաջին անգամն էր, որ կը մասնակցէր այս ոլիմպիականին:



ՎՏԱՆԳՈՒԱԾ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆ

Ֆրանսական «Լը Փուեն» շաբաթաթերթի Հոկտեմբեր 5-ի համարը նուիրուած է արցախեան ողբերգութեան:

Հիմնական վերնագրերն են

-Էթնիկ զտում՝ մեր աչքերուն առջեւ.

-Վանքեր՝ վտանգի մէջ. յիշողութեան ջնջում.

-Ալիէվ եւ Էրտողան. անպատժելիութիւն՝ մինչև ո՞ր.

Հանդէսին կողքէն յստակ է, որ գոնէ Ֆրանսացիք տեղեակ են պատմական ողբերգութեան, գոնէ տպագիր մամուլը գիտէ ցեղասպաններուն անունները, բայց այդ բոլորը ի՞նչ կը փոխեն հազարերեսանի քաղաքական աշխարհին մէջ:

Իսկ մենք գոնէ հիմա կը սկսի՞նք մտածել մեր ընելիքներուն մասին, որ ցեղասպանուելու մեր «բացառիկ ձիրքով» ամսագրային «Ծախուող» յօդուածներու նիւթ չդառնանք: Արտակ Հերիքեան



ՕՓԻԻՍ ՔԼԱՍԻՔ

Օփիւս Քլասիք միջազգային մրցանակին 2023-ի «Տարուան երգչուհին» մրցանակով պարգեւատրուեր է օփերայի միջազգային աստղ Յասմիկ Գրիգորեանը:

Լուսանկարին մէջ կ'երեւի Յ. Գրիգորեան մրցանակը ստանալու պահուն, Պեռլինի (Գերմանիա) Քոնցերտհալուի մէջ տեղի ունեցած կալա-համերգի ընթացքին:



«ԼՈՒՍԱՆՈՅՇԻ ԱՉՔԵՐԸ»

19 Հոկտեմբեր 2023 թուականի երեկոյան ժամը 8-ին տեղի ունեցած է ցուցադրութիւնը «Լուսանոյշի Աչքերը» Strange Mirror-ի քարթոն ֆիլմին:

Le Cpa-ի կողմէ Ethnopole-ի հետ համատեղ արտադրուած այս նախագիծը ծներ է շրջանի՝ Région Auvergne-Rhône-Alpes-ի աջակցութեամբ Amicale des Armenians-ի հետ հանդիպման շնորհիւ:

Ֆիլմը ցուցադրուած է Place des Ormeaux-ի շէնքին վրայ, շատ աւելի մեծ պաստառ որպէս, քան սովորական պաստառները, եւ շատ աւելի մատչելի դիտորդներուն համար:

Թռչող կռունկին հետեւելով, դիտողը կը թերթատէ աքսորի մեծ գիրքին էջերը, երազային փորձառութեան մը ընդմէջէն, ուր կը քալենք երիտասարդին հետ Օսմանեան կայսրութենէն մինչեւ Պէրու, Մարսէյ եւ Բրիվաս:





Հ.Մ.Ը.Մ. ԿԱՄՔԻ ՄՐՑԱՇԱՐՔԸ

Ուրբաթ, 1 Սեպտեմբեր 2023-ին սկսաւ Հ.Մ.Ը.Մ. Կամքի տարեկան եգիպտահայ պասքէթ-պոլի մրցաշարքը, հովանաւորութեամբ Գերշ. Տ. Աշոտ Եպս. Մնացականեանի՝ բարեխնամ առաջնորդ Եգիպտոսի հայոց թեմին, եւ նախագահութեամբ Օր. Վարդուի Թօփալեանի:

Օրուան առաջին մրցումը Աղեքսանդրիոյ Հ.Մ.Ը.Մ. ՆՈՒՊԱՐԻ եւ Հ.Մ.Ը.Մ. Կամքի աղջիկներու խումբերուն միջեւ էր: Հ.Մ.Ը.Մ. ՆՈՒՊԱՐԻ խումբը, որմէ կը բացակայէին երեք մարզիկուհիներ, ունէր միայն հինգ խաղացող, որոնցմէ մէկը հազիւ քանի մը վայրկեան խաղալէ ետք, չկարողացաւ շարունակել: Հ.Մ.Ը.Մ. Կամքի աղջիկները արդէն թիւի անհասանելի տարբերութիւն արձանագրած էին երբ Հ.Մ.Ը.Մ. ՆՈՒՊԱՐԻ երկրորդ մարզիկուհի մը հեռացաւ դաշտէն յոգնութեան պատճառաւ: Ստիպուած, Հ.Մ.Ը.Մ. Կամքի մարզիչը իր խումբէն երկու մարզիկուհիներ հեռացուց եւ մրցումը շարունակուեցաւ երեքական աղջիկներով ու վերջացաւ ի նպաստ Կամքի աղջիկներուն 56-16 արդիւնքով, որոնք անցան Կիրակի օրուան աւարտականին:

Երկրորդ մրցումը հիւրընկալ ակումբին եւ Սրբուհի Թերեզայի տղոց խումբերուն միջեւ էր: Սկիզբը արդիւնքի տարբերութիւնը քիչ էր ու Կամքի տղաքը լաւ պայքար մղեցին, սակայն Սրբուհի Թերեզայի շատ երիտասարդ ու արագ մարզիկներուն դիմաց չկարողացան տոկալ ու մրցումը աւարտեցաւ 60-42, ի նպաստ Սրբուհի Թերեզային:

Շաբաթ, 2 Սեպտեմբերին առաջին մրցումը, նախորդ օրուան յաղթական՝ Սրբուհի Թերեզայի եւ Հ.Մ.Ը.Մ. Արարատի տղոց միջեւ էր: Թէպէտ սկիզբը ուժերը բաւական հաւասար կ'երեւէին ըլլալ, սակայն Սրբուհի Թերեզայի երիտասարդ մարզիկներուն փորձառութեան պակասը սատարեց, որ Արարատը վերջ ի վերջոյ առաւելութիւն արձանագրէ ու պահէ զայն: Մրցումը աւարտեցաւ 76-60 արդիւնքով, ի նպաստ Արարատի խումբին:

Երկրորդ մրցումը՝ ամենէն սպասուածը Գահիրէի Հ.Մ.Ը.Մ. ՆՈՒՊԱՐԻ եւ Հ.Մ.Ը.Մ. Արարատի աղջիկներուն միջեւ խաղն էր: Հ.Մ.Ը.Մ. ՆՈՒՊԱՐԻ աղջիկները սկսան հանդարտ ու ինքնավստահ ու իրենց արագ ու ճշգրիտ խաղարկութեամբ շփութեան մատնեցին մրցակից աղջիկները, որոնք թէպէտ մինչեւ խաղին աւարտը պայքարեցան, գոնէ արդիւնքի տարբերութիւնը նուազեցնելու համար, սակայն մրցումը աւարտեցաւ ի նպաստ Հ.Մ.Ը.Մ. ՆՈՒՊԱՐԻ, 72-37 արդիւնքով:

Օրուան վերջին մրցումը երկու Հ.Մ.Ը.Մ. ՆՈՒՊԱՐԻներուն միջեւ էր, որ մակարդակի մեծ տարբերութեան պատճառով չկարողացաւ ներկաներուն ուշադրութիւնը գրաւել ու աւարտեցաւ ի նպաստ Գահիրէի խումբին, 73-48 արդիւնքով:

Կամքի վարչութիւնը ճաշկերոյթ մը կազմակերպած էր Յառաջդիմասէրի դաշտին վրայ, ուր մարզասէր հասարակութիւնէն շատեր, մարզիկներուն կողքին, հաճելի երեկոյ մը անցուցին մինչեւ ուշ գիշեր:

Կիրակի օրուան երկու աւարտական մրցումներուն առաջինը Գահիրէի Հ.Մ.Ը.Մ. ՆՈՒՊԱՐԻ եւ Հ.Մ.Ը.Մ. Կամքի աղջիկներուն միջեւ էր. ուժերու անհամեմատ տարբերութեան պատճառով Հ.Մ.Ը.Մ. ՆՈՒՊԱՐԻ աղջիկները դիւրին յաղթանակ մը արձանագրեցին, 51-27 արդիւնքով: Խմբապետուհի Մարալ Յակոբեան-Նաճարեան ստացաւ բաժակը, որ նուիրած էր Տիար Նորայր Պէնտիանեանը: Վարձքը կատար խումբին պատասխանատու Սեւան Տրդատեանի եւ անոր օգնական Արեգ Աբգարեանի, այս յաղթանակին համար:

Օրուան երկրորդ աւարտականը, ջիղերու պրկում ստեղծող մրցումը Գահիրէի Հ.Մ.Ը.Մ. ՆՈՒՊԱՐԻ եւ Հ.Մ.Ը.Մ. Արարատի տղոց խումբերուն միջեւ: Խաղին սկիզբէն Հ.Մ.Ը.Մ. ՆՈՒՊԱՐԻ տղաքը տիրապետեցին խաղին, իրենց գնդակի արագ անցումներով եւ ստոյգ արձակում-



ներով անկարողության մատնեցին Հ.Մ.Ը.Մ. Արարատի տղաքը, որոնք ամեն մրցաշարի յաղթելու յոյսով կը ներկայանան: Մրցումը ավարտեցաւ 67-45 արդիւնքով, ի նպաստ Հ.Մ.Ը.Մ. ՆՈՒՊԱՐԻ տղոց, որոնց խմբապետը՝ Հրազդան Գալընեան ստացաւ բաժակը, որ նուիրած էին Տէր եւ Տիկին Կարպիս Միսքեանը: Վարձքը կատար խումբին պատասխանատու Ռուբէն Սիմոնեանի եւ անոր օգնական Վարդան Աւետիսեանի, այս յաղ-

թանակին համար:

Մրցաշարին ամբողջ տեւողութեան ընթացքին Տիկին Մարիա Հալաճեան կը ներկայացնէր մրցումներն ու մարզիկները: Վարձքը կատար Հ.Մ.Ը.Մ. Կամբի վարչութեան, յաջող մրցաշարք մը կազմակերպելուն համար:

*Սօսի Ներքեան-Յակոբեան
Սեպտեմբեր 2023*





ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ ՄՐՑԱՇԱՐՔԸ

Ուրբաթ 6, Շաբաթ 7 եւ Կիրակի 8 Հոկտեմբեր 2023-ին, Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐը կազմակերպած էր իր տարեկան եգիպտահայ պասքէթ-պոլի մրցաշարքը, որ նուիրուած էր Եգիպտոսի զինեալ ուժերուն 6 Հոկտեմբեր 1973-ի յաղթանակի 50-ամեակին եւ ակումբին հիմնադրութեան 65-ամեակին:

Մրցաշարքը կը վայելէր հովանաւորութիւնը Եգիպտոսի հայոց թեմին բարեխնամ առաջնորդ Գերշ. Տ. Աշոտ Եպս. Մնացականեանի եւ նախագահութիւնը Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ ցկեանս պատույ ատենապետ տէր եւ տիկին Հրաչ Սիմոնեանի:

Ուրբաթ օրուան յայտագիրը սկսաւ հիւրընկալ ակումբին եւ Աղեքսանդրիոյ Հ.Մ.Ը.Մ. Կամքի տղոց խումբերուն միջեւ մրցումով, ուր ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ տղաքը դիրին յաղթանակ մը ձեռք ձգեցին, 77-39 արդիւնքով:

Երկրորդ մրցումը Հ.Մ.Ը.Մ. Կամքի եւ Հ.Մ.Ը.Մ. Արարատի աղջիկներու խումբերուն միջեւ էր: Թէպէտ Կամքի խումբը միայն վեց աղջիկներէ կը բաղկանար, սակայն անոնք հիանալի եւ կազմակերպւած խաղով հանդէս եկան Արարատի տասնվեց աղջիկներուն դիմաց, ու մինչեւ երկրորդ քառորդախաղի աւարտը առաւելութիւն արձանագրած էին: Եթէ անոնք երկու մարզիկուհիներ եւս ունեցած ըլլային, վերջնական արդիւնքը անպայման տարբեր պիտի ըլլար: Մրցումը աւարտեցաւ ի նպաստ Արարատի խումբին, 64-54 արդիւնքով:

Օրուան վերջին մրցումը Հ.Մ.Ը.Մ. Արարատի եւ Սրբուհի Թերեզայի տղոց խումբերուն միջեւ էր: Հակառակ որ Սրբուհի Թերեզան կարողացած էր նոր, պատանի ու արագաշարժ մարզիկներ միացնել իր խումբին, սակայն անոնք տակաւին դաշտի փորձառութեան կը կարօտին: Բաւական հետաքրքրական խաղը աւարտեցաւ ի նպաստ Արարատի խումբին, 61-45 արդիւնքով:

Երկար տարիներու ընդմիջումէ ետք, այս տարի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ վարչութիւնը

ճաշկերոյթ մը կազմակերպած էր ակումբին լայնատարած մարգագետնին վրայ, որ գոյնզգոյն լուսավառութեամբ, սեղաններու գեղեցիկ յարդարանքով ու մեղմ երաժշտութեան ընկերակցութեամբ աւելի քան 230 անդամներ, համակիրներ ու մարզիկներ ըմբոշխնեցին հաճելի երեկոյ մը:

Շաբաթ օրուան առաջին մրցումը սկսաւ երկու ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐներու աղջիկներուն խումբերուն միջեւ: Դժուար էր Աղեքսանդրիոյ խումբին վիճակը Գահիրէի խումբին դիմաց: Խաղը միակողմանի էր ու վերջացաւ ի նպաստ հիւրընկալ խումբի աղջիկներուն, 58-23 արդիւնքով:

Երկրորդ մրցումը ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ 17 տարեկանէն վար կորիւններուն եւ Ալ Կէշի խումբերուն միջեւ էր, ուր ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ մարզիկները ինքնավստահ ու արհեստավարժ խաղարկութիւն ցուցաբերեցին, դիրին յաղթանակ մը տարին 64-37 արդիւնքով եւ ստացան բաժակը, որ նուիրած էր տիար Եաննի Կրէկորիու: Վարձքը կատար խումբին պատասխանատու երէց մարզիկ Արեգ Աբգարեանին, այս յաղթանակին համար:

Ժամանակը հասած էր 65-ամեակի հանդիսաւոր տողանցքին, ուր ակումբին պարմանուհիներուն առաջնորդութեամբ, հինգ մարզական ակումբներուն երկսեռ մարզիկները մուտք գործեցին պասքէթ-պոլի դաշտէն ներս ու գրաւեցին իրենց տեղերը: ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ երկսեռ խումբերուն կողքին շարուեցան վեց տարեկանէն սկսեալ պասքէթ-պոլի եւ ֆութպոլի վեց խումբերուն երկսեռ մարզիկները:

Մրցաշարքին հանդիսավար տիկին Սեւան Տրդատեան բարի գալուստ մաղթեց բոլորին ու շնորհակալութիւն յայտնեց ներկաներուն ու մասնակցող խումբերուն: Ապա անդրադարձաւ վերջին օրերուն տարաբախտ Արցախի ժողովուրդին տեղահանութեան:

Ան շնորհակալութիւն յայտնեց Գահիրէի Ազգային Իշխանութեան ու Գահիրէի Տեղական ու Շրջանակային Յանձնաժողովներուն, որոնց նիւթական օժանդա-



կութեան շնորհիւ է որ կը գոյատեւէ ակումբը:

Տիկին Սեւանը հակիրճ ու յստակ կերպով պատմականը ըրաւ Հելիոպոլսոյ Հ.Մ.Ը.Մ.ին եւ Շուպրայի ՆՈՒՊԱՐԻ Դաշտին միացումին, 1958-ին Պօղոս Նուպարի ժառանգորդներէն գնուած այս հողին վրայ, ուր ցայժմ կը գործէ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ:

Ակումբին ատենապետ Տոքթ. Հրայր Տրդատեան 65-ամեակի յուշանուէրներ յանձնեց մասնակցող ակումբներու ատենապետներուն: Հ.Մ.Ը.Մ. Արարատի ատենապետ տիար Լեւոն Դելփեան ըրաւ իր սրտի խօսքը: Ապա յատուկ յուշանուէրներով պարգեւատրուեցան տիար Պերճ Թէրզեան՝ պատուոյ ատենապետ Եգիպտոսի ՀԲԸՄի Շրջանակային Յանձնաժողովին եւ ՀԲԸՄի Գահիրէի Տեղական Մասնաժողովին եւ տիար Հրաչ Սիմոնեան՝ պատուոյ ատենապետ Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ, իրենց տարիներու շարունակական, բարոյական եւ նիւթական անսակարկ օժանդակութեան համար:

Օրուան վերջին մրցումը Աղեքսանդրիոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ Հ.Մ.Ը.Մ. Արարատի տղոց խումբերուն միջեւ էր: Հակառակ որ Աղեքսանդրիոյ խումբը սկիզբը լաւ դիմադրութիւն ցոյց տուաւ եւ կարողացաւ թիւի տարբերութիւնը նուա-

զեցնել, սակայն վերջ ի վերջոյ Արարատը յաղթեց, 75-42 արդիւնքով:

Կիրակի, 8 Հոկտեմբերի առաջին խաղը ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ 16 տարեկանէն վար աղջիկներուն եւ Հելիոպոլսոյ խումբերուն միջեւ էր: Սկիզբը ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ պարմանուհիները շուարած ու անկազմակերպ էին, սակայն հետզհետէ սթափեցան, լաւ խաղարկութեամբ յաղթական հանդիսացան եւ ստացան բաժակը, որ նուիրած էին տէր եւ տիկին Ժիրայր Յակոբեան: Վարձքը կատար խումբին պատասխանատու տիկին Սիլվա Սիմոնեանին, իր տարած աշխատանքին համար:

Գաղութին վեթերաններէն կազմուած խառն երկու խումբերը կապոյտ եւ դեղին T-shirtներով դաշտ իջան ու սկսան «տաքնալ»: Երբեմնի արագ եւ ճարպիկ մարզիկներէն շատերու պարագային ժամանակը բարեացակամ չէր գտնուած ... Սակայն շատ հաճելի խաղով թէ՛ իրենք զուարճացան, թէ՛ ալ ներկաները զուարճացուցին:

Նախքան աղջիկներուն աւարտական մրցումին սկսիլը, ատենապետ տոքթ. Հրայր Տրդատեան յուշանուէրներով պարգեւատրեց մարզիկներ Գեղամ Թերզիպաշեանն ու Սարո Պըլըքտանեանը, որոնք տարիներ շարունակ իրենց մաս-



նակցութիւնը բերելէ ետք ակումբին պասքէթ-պոլի խումբերուն մէջ, այլեւս կը քաշուէին դաշտէն:

Աղջիկներու աւարտականը ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ ԵՒ Հ.Մ.Ը.Մ. Արարատի խումբերուն միջեւ սկսաւ, ինչպէս միշտ, պրկուած ջիղերով ու սիրտհատնումով: ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ աղջիկները շուարած կ'երեւէին, վիճակ մը որ ինքնավստահութիւն ներշնչեց Արարատի աղջիկներուն այնքան, որ երկրորդ քառորդախաղի աւարտին անոնք քանի մը թիւի առաւելութիւն արձանագրած էին:

Դադարին, ակումբին փոքրիկները ելոյթ ունեցան cheerleading-ի շատ յաջող պարով մը, պատրաստուած պարուսոյց տիկին Սիւզան Յակոբեան-Գարգուրի կողմէ, օգնութեամբ տիկին Տիանա Աւագեանի:

Մրցումին երրորդ քառորդախաղին ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ աղջիկները բարելաւելով իրենց խաղը, սկսան առաւելութիւն արձանագրել, յուսահատութեան մատնելով մրցակից խումբը: Մրցումը աւարտեցաւ ի նպաստ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ աղջիկներուն, 59-37 արդիւնքով ու խմբապետ Մարինա Սիմոնեան-Պըլըքտանեան ստացաւ բաժակը, որ նուիրած էր տիար Տիգրան Ալեքսանեան: Վարձքը կատար խումբին պատասխանատու տիկին Սեւան Տրդատեանի եւ օգնական Արեգ Աբգարեանի, իրենց տարած աշխատանքին համար:

Ժամանակը եկած էր մրցաշարքի վերջին խաղին՝ աւարտական մրցումին, ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ Հ.Մ.Ը.Մ. Արարատի տղոց խումբերուն միջեւ: Երկու խումբերուն խաղը իրենց մակարդակէն ցած սկսաւ, մէկ պասքէթ այս կողմ, մէկ պասքէթ այն կողմ, քիչ մը առաւելութիւն այս խումբին, առաւելութեան ջլատում այն խումբին կողմէ ու խաղացողներուն ... Հանդիսատեսներուն ջիղերը կը պրկուէին ու այդպէս ալ կը մնային: Երրորդ քառորդախաղին ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ տղաքը քանի մը թիւի առաւելութիւն ապահոված էին, երբ բարակ անձրեւ մը սկսաւ մաղուիլ դաշտը թրջելով եւ արգելք ըլլալով մրցումի ընթացքին: Բարեբախտա-

բար կարճ տեւեց անձրեւը ու դաշտը քանի մը վայրկեանի մէջ չոր էր արդէն: Սակայն ջուրի կաթիլներ սպրդելով score board-էն ներս ելեկտրական խանգարում յառաջացուցած էին ու այլեւս դադրած էր աշխատել: Պաստառ մը բերուեցաւ փոխարինելու համար անգործածելի score boardը, սակայն անօգուտ: Խաղը շարունակուեցաւ, սակայն նորէն սկսաւ անձրեւել: Կրկին ընդմիջում եղաւ ու այս անգամ հեռատեսիլ մը դաշտ բերուեցաւ ու քանի մը փորձէ ետք սկսաւ ծառայել որպէս score board: Մրցումը վերսկսաւ ու արդիւնքը 55-43 էր, ի նպաստ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ. կը մնար 5 վայրկեան 33 երկվայրկեան մրցումի աւարտին, երբ Արարատէն խաղացող մը երրորդ անգամ ըլլալով անվայել արտայայտութիւններ ըրաւ աւագ իրաւարարին, անոր ծայնակցեցան խումբէն քանի մը հոգի եւս ... Աւագ իրաւարարը խաղը դադրեցուց, մրցումը աւարտած նկատեց ու ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ յաղթական յայտարարեց, ի գայրոյթս Արարատի խաղացողներուն ու անոնց համակիրներէն շատերու: Արարատի խաղացողները անտեսելով իրենց պատասխանատուներուն յորդորանքը, հագուեցան ու լքեցին դաշտն ալ, ակումբն ալ:

ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ յաղթական տղոց խմբապետ Հրազդան Գալընեան ստացաւ բաժակը, որ նուիրած էին տղքթ. եւ տիկին Գէորգ Երզնկացեան: Վարձքը կատար Խումբին պատասխանատու տիար Ռուբէն Սիմոնեանի եւ օգնական տիար Վարդան Աւետիսեանի, այս յաղթանակին համար:

Մասնաւոր շնորհակալութիւն տիկին Սեւան Տրդատեանին, որ մեծ յաջողութեամբ վարեց մրցաշարքը. նաեւ DJ Ռոպեր Թաշճեանի, որուն հնչեցուցած ընտրեալ երգերն ու եղանակները մեծապէս սատարեցին խանդավառելու ներկաները: Շնորհակալութիւն տէր եւ տիկին Վարդ Ալեքսանեանի, որոնք, ինչպէս միշտ, այս տարի եւս նուիրած էին մետալինները:

Սօսի Ներերեան-Յակոբեան
Հոկտեմբեր 2023





Հ.Մ.Ը.Մ. ԱՐԱՐԱՏԻ ՏԱՐԵԿԱՆ ՄՐՑԱՇԱՐՔԸ

Հինգշաբթի, 26 Հոկտեմբեր 2023-ին սկսաւ Հ.Մ.Ը.Մ. Արարատի տարեկան եգիպտահայ պասքէթ-պոլի շրջաշարքը, հովանաւորութեամբ Եգիպտոսի Հայոց Թեմին Բարեխնամ Առաջնորդ Գերշ. Տ. Աշոտ Եպս. Մնացականեանի: Պատույ հիւրերն էին Գերապայծառ Տ. Գրիգոր Օգոստինոս Եպս. Գուսա, Վիճակաւոր Առաջնորդ Աղեքսանդրիոյ ու Երուսաղէմի Կաթողիկէ Հայոց եւ Նորին Գերազանցութիւն դոկտ. եւ տիկին Հրաչեայ Փօլատեան՝ Արտակարգ եւ Լիազօր Դեսպան Հայաստանի Հանրապետութեան: Մրցաշարքը կը վայելէր տէր եւ տիկին Պերճ Հալաճեանի նախագահութիւնը:

Հինգշաբթի օրուան յայտագրին վրայ կային ֆուդսալի երկու մրցումներ Հ.Մ.Ը.Մ. Արարատի 12 տարեկանէն վար եւ Ալ Զահրա Էլ Րէհապի տղոց խումբերուն միջեւ. նաեւ Հ.Մ.Ը.Մ. Արարատի կրտսեր եւ Ալ Զահրա Էլ Րէհապի տղոց խումբերուն միջեւ: Հ.Մ.Ը.Մ. Արարատի տղաքը յաղթական հանդիսացան եւ ստացան բաժակը, որ նուիրած էր տիար Սարգիս Գըզըլեան:

Մրցաշարքին պասքէթ-պոլի խաղերը սկսան Ուրբաթ, 27 Հոկտեմբերին, Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ Աղեքսանդրիոյ Հ.Մ.Ը.Մ. Կամքի աղջիկներուն խումբերուն միջեւ: Թէպէտ Կամքի աղջիկները բաւական լաւ կազմակերպուած խաղարկութիւն ցուցաբերեցին, սակայն 6 մարզիկուհիներով անկարելի էր տոկալ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ 12 մարզիկուհիներուն դիմաց: Մրցումը աւարտեցաւ 56 – 28 արդիւնքով, ի նպաստ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ աղջիկներուն:

Օրուան երկրորդ մրցումը Աղեքսանդրիոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻն եւ Սրբուհի Թերեզա տղոց խումբերուն միջեւ էր, որուն ընթացքին ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ տղաքը շատ լաւ խաղարկութեամբ եւ դիմադրութեամբ կարողացան Սրբուհի Թերեզայի տղոց շփոթութեան մատնել, որոնք, ծածկելու համար իրենց ձախողութիւնը, բրտութեան դիմեցին: Հակառակ որ

ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ լաւ խաղացողներէն մէկը հեռացուեցաւ դաշտէն եւ հիւանդանոց փոխադրուեցաւ լուրջ վնասի մը պատճառաւ, անոնք կրցան վերջին վայրկեաններուն առաւելութիւն արձանագրել, պահել զայն ու յաղթական հանդիսանալ 52–50 արդիւնքով, սրտի տազնապ պատճառելով յաղթուած խումբին համակիրներէն մէկուն, որ նոյնպէս հիւանդանոց փոխադրուեցաւ:

Օրուան վերջին մրցումը Հ.Մ.Ը.Մ. Արարատի եւ Հ.Մ.Ը.Մ. Կամքի տղոց խումբերուն միջեւ էր: Կամքի տղաքը լաւ ու մաքուր խաղարկութեամբ մի քանի անգամ առաւելութիւն ձեռք ձգեցին, սակայն պահեստի լաւ մարզիկներու չգոյութեան պատճառաւ չկարողացան տոկալ եւ մրցումը աւարտեցաւ ի նպաստ հիւրընկալ խումբին, 60–38 արդիւնքով:

Շաբաթ, 28 Հոկտեմբերին առաջին մրցումը Հ.Մ.Ը.Մ. Արարատի կրտսեր տղոց եւ Էլ Թայարանի խումբերուն միջեւ էր, որ Արարատի տղաքը յաղթեցին 61–38 արդիւնքով եւ ստացան բաժակը, որ նուիրուած էր տէր եւ տիկին Երջան Գասարճեանի կողմէ:

Աղեքսանդրիոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ Հ.Մ.Ը.Մ. Արարատի աղջիկներուն միջեւ մրցումը միակողմանի էր, չկարողացաւ ներկաներուն ուշադրութիւնը գրաւել եւ վերջացաւ ի նպաստ հիւրընկալ աղջիկներուն, 55 – 28 արդիւնքով:

Օրուան երրորդ մրցումը երկու ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻներու տղոց խումբերուն միջեւ էր, որ ընթացաւ խաղաղ ու մաքուր մթնոլորտի մէջ: Անշուշտ մակարդակի ու թիւի մեծ տարբերութեան պատճառաւ, արդիւնքի անհասանելի տարբերութիւն արձանագրած էին Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ տղաքը, որոնք խաղը աւարտեցին ի նպաստ իրենց, 66 – 39 արդիւնքով:

Կիրակի, 29 Հոկտեմբերին երկու աւարտական մրցումներն էին ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ Հ.Մ.Ը.Մ. Արարատի երկսեռ խումբերուն միջեւ: ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻն աղջիկները մրցումին առաջին վայրկ-



եաններէն տիրապետեցին խաղին, անկարողութեան ու յուսահատութեան մատնելով մրցակից աղջիկները: Մրցումը ավարտեցաւ 48-28 արդիւնքով, ի նպաստ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ աղջիկներուն եւ խմբապետ Մարինա Սիմոնեան-Պըլըքտանեան ստացաւ բաժակը, որ նուիրուած էր տէր եւ տիկին Վարուժ Զիլինկիրեանի կողմէ: Վարձքը կատար խումբին պատասխանատու Սեւան Տրդատեանին եւ օգնական Արեգ Աբգարեանին, այս յաղթանակին համար:

Մրցաշարքին վերջին մրցումը Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ Հ.Մ.Ը.Մ. Արարատի տղոց խումբերուն միջեւ էր: Երկու խումբերուն մարզիկները պրկուած ջիղերով սկսան խաղը, մի քանի վայրկեան անցաւ առանց որ ոչ մէկ կողմ կարենայ պասքէթ մը իսկ արձանագրել: Խառնաշփոթ վիճակ մը կը տիրէր մանաւանդ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ խումբին մէջ, ուր լաւագոյն մարզիկներ չկարողանալով ձերբազատուիլ իրենց ձախող արձակումներէն, սկսան յուսալքուիլ, առիթը ընծայելով

մրցակից խումբին, որ սիրտ առնէ եւ յաջող խաղով մը թիւի առաւելութիւն արձանագրէ: Զիղերու պայքարը սկսաւ խաղացողներուն, մարզիչներուն եւ հանդիսատեսներուն շարքերէն ներս: Պասքէթ մը այն կողմ, ձախողութիւն մը այս կողմ ու վայրկեանները ժամեր կը թուէին ըլլալ:

Երրորդ քառորդախաղին ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ տղաքը քիչ մը բարելաւելով իրենց խաղը, հաւասարեցան ու անցան, յոյսի նշոյլ մը ներշնչելով իրենց համակիրներուն, սակայն խաղին ավարտին շատ մօտ Արարատը կրկին առաւելութիւն արձանագրեց եւ մրցումը ավարտեց ի նպաստ իրեն, 62 – 58 արդիւնքով: Երէց տղոց բաժակը նուիրուած էր տէր եւ տիկին Նուրհան Քիւրքճեանի կողմէ, իսկ մրցաշարքին բոլոր մետայլները նուիրուած էին տէր եւ տիկին Վարդ Ալեքսանեանի կողմէ:

Սօսի Ներսիսեան-Յակոբեան



ԱՆԴԱՄԱԿԱՆ

ԽՆԴԱԿՑՈՒԹԻՒՆ

20 Հոկտեմբեր 2023 թուականին ամուսնութեան խորհուրդով կապուեցան ՀԲԸՄի Գահիրէի մասնաճիւղի գանձապահ տէր եւ տիկ. Գօգօ Աւանեանի դուստրը՝ Ժուլիան եւ տէր եւ տիկ. Լիպարիտ Գարգուրներուն ուստրը՝ Ալենը:

«Տեղեկատու»ի անունով մեր խնդակցութիւնը կը յայտնենք այս ուրախ առիթով եւ կը մաղթենք որ Աստուած իրենց երկար տարիներ շնորհէ, կանաչ ճանապարհ եւ կապոյտ երկինք պարգեւէ:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

ՀԲԸՄի Գահիրէի Երուանդ Գ. Աղաթօն գրադարանը շնորհակալութիւն կը յայտնէ Աննա Գազանճեան-Թորոսեանին, որ իր ընտանեկան գրադարանէն երկու շարքեր նուիրեց՝ Յակոբ Օշականի «Յուսաբեր»ի հրատարակութիւնը եղող «Մնացորդաց»ի երեք հատորները եւ Թուսթոյի «Պատերազմ եւ Խաղաղութիւն» վէպին երկու հատորները:

